



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶ

**ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
2022-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ**

Զ Ա Ր Գ Ա Ց Մ Ա Ն Հ Ն Գ Ա Մ Յ Ա Ծ Ր Ա Գ Ի Ր

Մշակվել է՝ համայնքի ղեկավարին կից գործող ՀԶՀԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով խորհրդակցական մարմնի կողմից՝ Մերթոդական ուղեցույց է հանդիսացել Թումանյան համայնքի 2016-2020 թթ. ՀԶՀԾ-ն

Ներկայացվել է՝ համայնքի ղեկավար Սուրեն Թումանյանի կողմից

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 2022թ. ապրիլի 15-ի թիվ 26 Ա որոշմամբ
(նիստի ամսաթիվը)

ԹՈՒՄԱՆՅԱՆ 2022

Հապավումների ցանկ

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՏԿԵՆ	Տարածքային կառավարման և Ենթակառուցվածքների նախարարություն
ԱԻՆ	Արտակարգ իրավիճակների նախարարություն
ԳՄՀԸ	Գերմանիայի Միջազգային համագործակցության ընկերություն
ԱՄՆ ՄՁԳ	Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալություն
ՀՖՄ ՀԿ	«Համայնքների ֆինանսիստների միավորում» հասարակական կազմակերպություն
ԲԲՀ	Բազմաբնակավայր համայնք
ՏԻ	Տեղական ինքնակառավարում
ՏԻՄ-եր	Տեղական ինքնակառավարման մարմիններ
ՄԺԾԾ	Միջնաժամկետ ծախսերի ծրագիր
ՄՁԾ	Մարզային զարգացման ծրագիր
ՏՁ	Տարածքային զարգացում
ՏՁԾ	Տարածքային զարգացման ծրագիր
ՀՁՀԾ	Համայնքի զարգացման հնգամյա ծրագիր
ՀՁՔԾ	Համայնքի զարգացման քառամյա ծրագիր
ՀՏՁՀ	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
ԽՄ	Խորհրդակցական մարմին
ԲԱԽ	Բնակավայրային աշխատանքային խումբ
ՀԿՏՀ	Համայնքի կառավարման տեղեկատվական համակարգ
ՈՒԹՀՎ	Ուժեղ կողմեր, թույլ կողմեր, հնարավորություններ, վտանգներ
ՔՀՄՀ	Քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածներ
ՀՈԱԿ	Համայնքային ոչ առևտրային կազմակերպություն
ՆՈՒՀ	Նախադպրոցական ուսումնական հաստատություն

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	4
1. Համայնքի իրավիճակի բնութագրում, վերլուծություն և գնահատում.....	7
2. Համայնքի տեսլականի, ռազմավարության և ՀԶՀԾ-ի հիմնական նպատակների սահմանում.....	43
3. Համայնքի տարածքում նախատեսվող (շարունակվող) հանրապետական և մարզային, միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրերի ու միջոցառումների ներկայացում.....	45
4. Համայնքի ֆինանսական իրավիճակի վերլուծում, գնահատում և կանխատեսում.....	47
5. Համայնքի ոլորտային ծրագրերի ցանկի կազմում և առաջնահերթությունների սահմանում, ֆինանսապես ապահովված ծրագրերի ձևակերպում և ամփոփում, լրացուցիչ ֆինանսական միջոցների հայթայթման հնարավորությունների ներկայացում.....	56
6. Համայնքի սեփականություն համարվող գույքի (շենքերի, շինությունների, հողամասերի և այլն) կառավարման (օտարման, վարձակալության տրամադրման) հնգամյա ծրագիրը.....	82
7. ՀԶՀԾ-ի իրականացման մշտադիտարկման (մոնիթորինգի) և գնահատման, տարեկան հաշվետվությունների կազմման ձևաչափերը.....	86
Եզրափակում.....	89
Հավելված 1. Համայնքապետարանի աշխատակազմի կառավարման կազմակերպական կառուցվածքը	90
Հավելված 2. Համայնքի սեփականություն համարվող գույքի ցանկը և վիճակը՝ ըստ առանձին բնակավայրերի, համայնքի բնակավայրերում սոցիալ-տնտեսական հիմնական ենթակառուցվածքների առկայությունը և ընդհանուր վիճակը.....	91
Հավելված 3. Համայնքի հողային հաշվեկշիռը՝ ըստ առանձին բնակավայրերի.....	105
Հավելված 4. Համայնքում առկա անասնազլխաքանակի տվյալներն՝ ըստ առանձին բնակավայրերի.....	107
Հավելված 5. Համայնքի հիմնական ցուցանիշների գնահատումը և կանխատեսումը.....	109

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի 2022-2026 թթ. զարգացման հնգամյա ծրագիրը (այսուհետ՝ ՀՀԾ) մշակվել է՝ հիմք ընդունելով ներկայումս գործող «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ ՏԻՄ-երի իրավասությունները, համայնքի ղեկավարի լիազորությունները նրա գործունեության բնագավառներում (ուլորտներում), ՀՀԾ-ի մշակման և կառավարման վերաբերյալ օրենքի 37-րդ, 38-րդ և 53-րդ հոդվածների դրույթները, ինչպես նաև 2016-2020թթ-ի կազմված համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը:

ՀՀԾ-ն մշակելիս առանձնացվել և հաշվի են առնվել մեթոդաբանական հետևյալ չափանիշները՝

- համայնքի ֆինանսական կարողությունը.
- համայնքի բնակչության թվաքանակը.
- համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերում առկա ենթակա կառույցները և մատուցվող հանրային ծառայությունները.
- համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի առանձնահատկությունները.
- համայնքում առկա վտանգները (ռիսկերը):

Հաշվի առնելով, որ համայնքի կազմում ընդգրկված Քոբեր կայարանի գյուղը գտնվում է Թումանյան քաղաքից ընդամենը 1 կմ հեռավորության վրա և ունի ընդամենը 30 բնակիչ, ՀՀԾ-ում Թումանյան քաղաքի վերաբերյալ բերված բոլոր տվյալներում ներառվել է նաև Քոբեր կայարանի գյուղի տվյալները:

ՀՀԾ-ի բովանդակությունը պայմանավորված է նաև ՀՀԾ-ի մշակմանը մասնակցած՝ համայնքի ԲԱԽ-երի կողմից կատարված աշխատանքով և առաջարկություններով, համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի ռեսուրսային (մարդկային, գույքային, ֆինանսատնտեսական, տեխնիկական և այլ) հնարավորություններով, համայնքային ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և ենթակառուցվածքների առկայությամբ, ինչպես նաև այն իրողությամբ, որ համայնքը ձևավորվել է համայնքների խոշորացման պետական փորձնական ծրագրի իրականացմամբ, գտնվում է ՀՀ կառավարության, միջազգային դոնոր և տեղական կազմակերպությունների ուշադրության կենտրոնում և, այս առումով, մեծացել է համայնքի զարգացմանը և առկա խնդիրների լուծմանը նրանց ներգրավելու հնարավորությունները: ՀՀԾ-ում հնարավորինս հաշվի են առնվել նաև համայնքի կազմում ընդգրկված բոլոր բնակավայրերում հանրային ծառայությունների մատչելիությանը և հասանելիությանը, նոր ծառայությունների մատուցմանը վերաբերող և դրանցով պայմանավորված՝ լրացուցիչ ծախսեր առաջանալու խնդիրները, համայնքի կազմում ընդգրկված բոլոր բնակավայրերը համաչափ զարգացնելու անհրաժեշտությունը, համայնքի տարածքում տնտեսական գործունեության խրախուսմանն ուղղված առկա հնարավորությունները, տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման (հատկապես՝ գյուղատնտեսության, փոքր և միջին բիզնեսի, տուրիզմի և այլնի) հնարավորությունները, համայնքի տարածքում պատշաճ կառավարման իրականացման անհրաժեշտությունը, ինչպես նաև համայնքում աղետի բազմաբնույթ վտանգները (ռիսկերը) և դրանց կառավարման միջոցառումները:

ՀՀԾ-ն մշակելիս ուսումնասիրվել է նաև Թումանյան բազմաբնակավայր համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի՝ նախկին համայնքների նախորդ հնգամյա

Ժամանակաշրջանի զարգացման ծրագրերը, միտումները և դրանց շարունակականության հնարավորությունները:

Համայնքի 2022-2026թթ. ՀՀԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով համայնքի նորընտիր ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի դրույթները և նպատակ հետապնդելով հետևողականորեն բարեփոխումներ իրականացնելու ճանապարհով աստիճանաբար լուծել համայնքում առկա հիմնախնդիրները և բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները:

ՀՀԾ-ն դիտարկելով որպես համայնքի ռազմավարական պլանավորման և մասնակցային կառավարման կարևորագույն միջոց, համայնքի ղեկավարին կից գործող ՀՀԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով խորհրդակցական մարմինը՝ փաստաթուղթը մշակելիս, հատուկ ուշադրություն է դարձրել և ձգտել, որպեսզի այն հնարավորինս համահունչ լինի գործողության մեջ դրված ՀՀ ռազմավարական, մարզային և տարածաշրջանային զարգացման ծրագրերին՝ ակնկալելով ՀՀ պետական կառավարման մարմինների, ՔՄԿ կազմակերպությունների և շահագրգիռ այլ անձանց հետ լիակատար փոխըմբռնում ՀՀԾ-ում ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցություն դրանց լուծման գործում:

ՀՀԾ-ի 1-ին բաժինը ներառում է՝ համայնքի սոցիալ-տնտեսական ընդհանուր, բնակավայրային և ոլորտային փաստացի իրավիճակի և համայնքի կողմից մատուցվող ծառայությունների բնութագրումը և վերլուծությունը՝ հաշվի առնելով ՀՀԾ-ի մշակման մեթոդաբանական չափանիշների ազդեցությունը համայնքի ՏԻՄ-երի գործունեության ոլորտների կազմի վրա, համայնքում առկա սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների ֆիզիկական վիճակի գնահատումը, դրանց շահագործման, պահպանման և նորոգման հետ կապված խնդիրները, համայնքի կազմում ընդգրկված բոլոր բնակավայրերում հիմնական ենթակառուցվածքների առկայության և ընդհանուր վիճակի, ինչպես նաև դրանց զարգացման հնարավորությունների, կարողությունների ու ռեսուրսների վերլուծումը և գնահատումը: Համայնքի ընդհանուր և ոլորտային կարիքների գնահատման հիման վրա, ըստ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի, կազմվել է համայնքում առկա հիմնախնդիրների ցանկը՝ առանձնացնելով նրանք, որոնց լուծումը նպատակահարմար է ներառել սույն ՀՀԾ-ում՝ ելնելով համայնքի ռեսուրսային հնարավորություններից: Բաժնում ներառվել է նաև համայնքի ՈԻԹՀՎ-վերլուծությունը՝ հիմնվելով համայնքի իրավիճակի վերլուծության ու գնահատման արդյունքների վրա և ձևակերպելով համայնքի ուժեղ և թույլ կողմերը, զարգացման ներքին ու արտաքին հիմնական հնարավորությունները, համայնքին սպառնացող հիմնական վտանգները:

ՀՀԾ-ի 2-րդ բաժինը ներառում է՝ համայնքի երկարաժամկետ տեսլականը, զարգացման ռազմավարությունը և սույն ՀՀԾ-ի հիմնական նպատակները:

ՀՀԾ-ի 3-րդ բաժինը ներառում է՝ պետության, միջազգային և տեղական, քաղաքացիական հասարակության, մասնավոր հատվածի և այլ կազմակերպությունների կողմից համայնքում գալիք հինգ տարիների համար նախատեսվող (շարունակվող) հանրապետական, մարզային, տարածաշրջանային, միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրերն ու միջոցառումները:

ՀՀԾ-ի 4-րդ բաժինը ներառում է՝ համայնքի ֆինանսական վիճակի վերլուծությունը, գնահատումը և կանխատեսումը՝ ըստ համայնքի բյուջեի եկամտային ուղղությունների (սեփական եկամուտներ, պաշտոնական դրամաշնորհներ, փոխառու միջոցներ)՝ դիտարկելով նախորդ երկու և գալիք հինգ տարիների եկամտային տվյալները:

ՀՀԾ-ի 5-րդ բաժինը ներառում է՝ ԲԱԽ-երի կողմից, ըստ բնակավայրերի, առաջարկված առաջնահերթ ոլորտային ծրագրերի ցանկը, ապա՝ համայնքի ղեկավարին կից գործող ՀՀԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով խորհրդակցական մարմնի կողմից համայնքի զարգացման ոլորտային ծրագրերի ընտրությունը, դրանց առաջնահերթությունների սահմանումը՝ ելնելով համայնքի իրավիճակի վերլուծության և գնահատման արդյունքներից, բացահայտված կարիքներից ու հիմնախնդիրներից, ենթակառուցվածքների վիճակից և ՀՀԾ-ի հիմնական նպատակներից: Բաժնում ձևակերպվել և ամփոփվել են ՀՀԾ-ում ներառվող ոլորտային ծրագրերը՝ օգտագործելով դրանց կազմման՝ Մեթոդաբանությունում բերված օրինակելի ձևը, ինչպես նաև ներկայացնելով ծրագրերի ֆինանսավորման աղբյուրները (համայնքի բյուջե, ՀՀ պետական բյուջե, դոնոր կազմակերպություններ, այլ) և դրանց մոտավոր արժեքներն՝ ըստ գալիք հինգ տարիների:

Բաժնում ներկայացվում են նաև ՀՀԾ-ում ներառված ոլորտային ծրագրերն՝ ըստ առանձին բնակավայրերի և առաջիկա հինգ տարիների:

ՀՀԾ-ի 6-րդ բաժինը ներառում է՝ համայնքի սեփականություն համարվող շենքերի ու շինությունների, հողամասերի օտարման հնգամյա ծրագիրն՝ ըստ առանձին տարիների:

ՀՀԾ-ի 7-րդ բաժինը ներառում է՝ ՀՀԾ-ի իրականացման մշտադիտարկման (մոնիթորինգի) և գնահատման, տարեկան հաշվետվությունների կազմման և քննարկման ձևաչափերը:

ՀՀԾ-ի եզրափակումը ներառում է՝ համառոտ մոտեցումներ և դրույթներ՝ ՀՀԾ-ում փոփոխությունների և (կամ) լրացումների կատարման, քննարկման և հաստատման գործընթացների վերաբերյալ:

ՀՀԾ-ի հավելվածները ներառում են՝

- համայնքապետարանի աշխատակազմի կառավարման կազմակերպչական կառուցվածքը,
- համայնքի սեփականություն համարվող գույքի ցանկը և վիճակը՝ ըստ առանձին բնակավայրերի, համայնքի բնակավայրերում սոցիալ-տնտեսական հիմնական ենթակառուցվածքների առկայությունը և ընդհանուր վիճակը,
- համայնքի հողային հաշվեկշիռը՝ ըստ առանձին բնակավայրերի,
- համայնքում առկա անասնազխաքանակի տվյալներն՝ ըստ առանձին բնակավայրերի,
- համայնքի հիմնական ցուցանիշների գնահատումը և կանխատեսումը,
- համայնքի 2022-2026թթ. ՀՀԾ-ում ներառված ոլորտային ծրագրերի ձևակերպումներն՝ ըստ դրանց օրինակելի ձևի,
- համայնքի 2022-2026թթ. ՀՀԾ-ում ներառված ոլորտային ծրագրերն՝ ըստ առանձին բնակավայրերի:

1"ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄ, ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

1.1 ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

«Հ Ազգային ժողովի կողմից 2021 թվականի սեպտեմբերի 24-ին ընդունված «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ Թումանյան, Աթան, Ահնիձոր, Դսեղ, Լորուտ, Մարց, Շամուտ, Չկալով, Քարինջ համայնքների միավորման արդյունքում ձևավորվել է Թումանյան բազմաբնակավայր համայնքը:

Այսպիսով, ներկայում Թումանյան համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերն են՝ Թումանյան քաղաքը և Քոբեր կայարանի, Աթան, Ահնիձոր, Դսեղ, Լորուտ, Մարց, Շամուտ, Չկալով, Քարինջ գյուղերը(աղյուսակ 1): Համայնքի կենտրոնը Թումանյան քաղաքն է:

Աղյուսակ 1. Համայնքի բնակավայրերի վարչական տարածքի, առկա և մշտական բնակչության, տնային տնտեսությունների ցուցանիշները (01.01.2022 թ. դրությամբ)

Հ/հ	Բնակավայրի անվանումը	Վարչական տարածքը(հա)	Առկա բնակչության թվաքանակը (մարդ)	Մշտական բնակչության թվաքանակը (մարդ)	Առկա տնայինտնտեսությունների թվաքանակը	Մշտական տնայինտնտեսությունների թվաքանակը
1.	Թումանյան	1096,68	1620	1823	430	635
2.	Աթան	2609,0	265	259	75	86
3.	Ահնիձոր	6036,76	217	220	87	121
4.	Լորուտ	7648,38	1022	805	229	297
5.	Շամուտ	1796,07	185	293	62	73
6.	Քարինջ	3601,08	580	634	185	237
7.	Մարց	7117,34	554	446	122	143
8.	Դսեղ	7922,3	1870	2101	591	668
9.	Չկալով	412,15	157	167	55	59
	Ընդամենը	38239,76	6470	6748	1836	2319

Համայնքն իր վարչական սահմաններով սահմանակից է Ալավերդի, Փամբակ, Օծուն համայնքներին և ՀՀ Տավուշի մարզին:

Ստորև ներկայացվում է համառոտ տեղեկատվություն համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի մասին:

ՔԱՂԱՔ ԹՈՒՄԱՆՅԱՆ, ՔՈԲԵՐ ԿԱՅԱՐԱՆԻ ԳՅՈՒՂ

Քաղաքը նախկինում եղել է Թիֆլիսի նահանգի Լոռի-Բորջալուի գավառի կազմումևունեցել է Ձագիձոր, Ձաղիձոր անվանումները: Թումանյան է վերանվանվել 1951 թվականին՝ ի պատիվ Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի:

Ձաղիձորը 1921թ. հուլիսի 20-ի «ՀԽՍՀ վարչական վերաբաժանումների մասին» դեկրետով եղել է Լոռու գավառիԴսեղգավառամասիկազմում, 1930թ. սեպտեմբերի 9-ից՝Ալավերդուվարչականշրջանիկազմում, 1969թ.-ից՝ Թումանյանի վարչական շրջանի կազմում: Թումանյանը (նախկին Ձաղիձորը) 1947թ.-իցմինչև 1995թ. ունեցել է քաղաքատիպ ավանի կարգավիճակ: 1995թ.-ին «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքով

Լոռու մարզի կազմում Թումանյան քաղաքատիպ ավանին տրվել է համայնքի և քաղաքի կարգավիճակ:

Համայնքի կազմում ընդգրկված Քոբեր կայարանի գյուղը հիմնադրվել է որպես երկաթուղային կայարան, գտնվում է Դեբեդ գետի ձախ ափին, Թումանյան քաղաքից 1 կմ հեռավորության վրա:

Գյուղը վարչատարածքային առումով սկզբում գտնվում էր Թումանյանի ավանային խորհրդի, հետագայում Թումանյան քաղաքային համայնքի կազմում:

Թումանյան քաղաքը գտնվում է Լոռու մարզի հյուսիս-արեւելյան մասում, զբաղեցնում է Դեբեդ գետի ստորին հոսանքի ավազանի աջափնյա մասը, Դեբեդի կիրճի աջափնյա դարավանդները: Քաղաքի բարձրությունը ծովի մակերևույթից 810 մետր է:

Թումանյան քաղաքի հեռավորությունը մայրաքաղաքից՝ 158 կմ է, մարզկենտրոն Վանաձորից՝ 38 կմ, տարածաշրջանային կենտրոն Ալավերդի քաղաքից՝ 14 կմ:

Քաղաքի մոտով է անցնում Մ-6 միջպետական նշանակության Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման ճանապարհը: Քոբեր կայարանով է անցնում Երևան-Թբիլիսի երկաթգծի 4 կիլոմետրանոց հատվածը:

Քաղաքի և Քոբեր կայարանի գյուղի կլիման մերձարևադարձային է, չափավոր շոգ և չորային ամառներով, մեղմ ձմեռներով: Ձմեռը չափավոր ցուրտ է, ձյան կայուն շերտով: Գարունը խոնավ է, երկարատև: Աշունը չափավոր է, երկրորդ կեսին՝ խոնավ: Տեղումների տարեկան քանակը կազմում է 680-750 մմ:

Քաղաքը ագրոկլիմայական տեսակետից ընկած է ինտենսիվ ոռոգման գոտում: Բնական լանդշաֆտները լեռնանտառներն են: Քաղաքը շրջապատված է անտառներով: Անտառները հարուստ են ընկուզենու, կաղնու, լորու, հացենու, հոնու, վայրի տանձենու, խնձորենու ծառատեսակներով, հատապտուղներով (մոշ, մոռ, մասուր, ալոճ), մեղրատու թփաբույսերով և բժշկության մեջ օգտագործվող դեղաբույսերով: Հիմնական ծառատեսակներն են լորենին, բոխին և հացենին: Գետափնյա հարթ տարածությունների վրա կան պտղատու այգիներ (խնձորի, դեղձի, սալորի, ընկույզի և այլն):

Քաղաքի տարածքում գտնվող հրակայուն կավային ապարների հանքավայրի բազայի վրա 1951թ. կառուցվել է Թումանյանի հրակայուն աղյուսի գործարանը, որը գործում էր մինչև խորհրդային կարգերի փլուզումը: Գործարանն արտադրում էր հրակայուն աղյուս, եռաշերտ ծայրակալներ, ընկալափոխանցիկ սարքեր:

Քաղաքի և Քոբեր կայարանի գյուղի տարածքը հարուստ է պատմամշակութային հուշարձաններով: Բնական հուշարձաններ են Դեբեդի խորը ձորը, գետի երկու ափերին խիստ թեք և աստիճանաձև բարձրացող լանջերի վրա տարբեր չափի քարախորշերը՝ շրջապատված խիստ թեք, անտառապատ լանջերով:

Պատմամշակութային հուշարձանները տարբեր են ըստ կառուցման ժամանակահատվածի (Ք.ա. 2-1 հազարամյակից մինչև Ք.հ. 13-15-րդ դարեր), ավելի բազմազան են 13-14-րդ դարերի հուշարձանները (եկեղեցիներ, ամրոցներ, գյուղատեղիներ): Տարբեր են նաև հուշարձանների պահպանվածության աստիճանները՝ սկսած ավերակներից մինչև լավ պահպանվածները:

Համայնքի տարածքում է Քոբայրի վանական համալիրը (Քոբայրավանք, 12-13-րդ դարեր), որի կազմում են Մարիամաշեն և գլխավոր միանավերը (12-13-րդ դարեր, երկուսն էլ թաղածածկ) և 13-րդ դարի թաղածածկ եկեղեցիները:

2002թ.-ին ՀՀ կառավարության կողմից հաստատված պատմության և մշակույթի հուշարձանների ցանկում՝ Թումանյան քաղաքում ներառված է 11 հուշարձան (9 միավոր), Քոբեր կայարանի գյուղում՝ 71 հուշարձան (8 միավոր):

ԳՅՈՒՂ ԱԹԱՆ

Գյուղը հիմնադրվել է 1827թ.-ին, Հաղպատի վանքի կալվածքները լքած գյուղացիների կողմից: Այդ են վկայում գյուղում և շրջակայքում եղած խաչքարերը և գերեզմանները: Գյուղը Աթան անունը ստացել է Աթանես Վարդապետի անունից:

Աթան գյուղը բնակեցվել է Հաղպատից, Սանահինից և Շիրակից տարբեր ժամանակներում տեղափոխված բնակիչներով:

Գյուղամիջում կա հին եկեղեցի, իսկ շրջակայքում՝ աշխարհիկ հին շինությունների ավերակներ:

Գյուղը գտնվում է Ալավերդի քաղաքից 24 կմ հարավ-արևելք, բարձրադիր և լեռնային վայրում՝ ծովի մակերևույթից 1650 մ բարձրության վրա, հեռավորությունը մայրաքաղաքից՝ 184 կմ, մարզկենտրոնից՝ 64 կմ, Ալավերդի քաղաքից՝ 45 կմ, համայնքի կենտրոնից՝ 28 կմ:

Բնակավայրը սահմանակից է Շամուտ և Ահնիձոր գյուղերին:

Գյուղի կլիման բարեխառն է, տևական, ցուրտ ձմեռներով: Ամեն տարի հաստատվում է կայուն ձնածածկույթ: Ամառները տաք են, համեմատաբար խոնավ: Տարեկան թափվում են 600-700 մմ մթնոլորտային տեղումներ: Ագրոկլիմայական տեսակետից գյուղն ընկած է մասնակի ոռոգման գոտում:

Գյուղի տարածքում կան բարձրորակ կավի հանքավայրեր:

ԳՅՈՒՂ ԱՀՆԻՁՈՐ

Ահնիձոր գյուղը պատմական արձանագրություններում հիշատակվում է դեռևս 16-17-րդ դարերից: Սակայն, այն ավելի հին է, քան ենթադրվում է, ինչի մասին են վկայում գյուղի մոտակայքում գտնվող խաչքարերը: Գյուղի ներկայիս բնակիչների նախնիները 19-րդ դարի երկրորդ կեսին եկել են Հաղպատ և Սանահին գյուղերից: Նրանք հիմնականում վանքի կալվածքները լքած բնակիչներ են եղել:

Գյուղում կա 13-րդ դարի եկեղեցի, գյուղի շրջակայքում կան 10-ից ավելի խաչքարեր:

Ահնիձորում է ծնվել հայ մեծ արձակագիր, կինոսցենարիստ Հրանտ Մաթևոսյանը:

Գյուղը գտնվում է մարզկենտրոնից 52 կմ հյուսիս-արևելք, Թումանյան քաղաքից 26 կմ հարավ-արևելք, լեռնային անտառապատ վայրում՝ ծովի մակերևույթից 1520 մետր բարձրության վրա: Գյուղի հեռավորությունը մայրաքաղաքից 177 կմ է, մարզկենտրոնից՝ 57 կմ, Ալավերդի քաղաքից՝ 37 կմ, համայնքի կենտրոնից՝ 23 կմ:

Բնակավայրը սահմանակից է Աթան, Շամուտ, Լորուտ գյուղերին և Իջևան քաղաքին:

Կլիման բարեխառն է, տևական, ցուրտ ձմեռներով: Ամեն տարի հաստատվում է կայուն ձնածածկույթ: Ամառները տաք են, համեմատաբար խոնավ: Տարեկան թափվում են 600-700 մմ մթնոլորտային տեղումներ: Ագրոկլիմայական տեսակետից գյուղն ընկած է մասնակի ոռոգման գոտում:

Գյուղը հարուստ է անտառներով, վայրի բերքատու ծառերով և բնական աղբյուրներով: Գյուղի տարածքով է անցնում Ահնիձոր գետը, որը գյուղից ներքև ձախից միախառնվում է Մարց գետին:

ԳՅՈՒՂ ԼՈՐՈՒՏ

Լորուտ գյուղը հիմնադրվել է 1843 թվականին, առաջնաբնակները եկել են նախկին Նոյեմբերյանի շրջանի ներկայիս Բերդավան, այն ժամանակվա Ղալաչա գյուղից, մի քանի ընտանիքներ եկել են նախկին Ալավերդու շրջանի գյուղերից:

Լորուտի մոտակայքում 1979թ. հայտնաբերվել են բրոնզե դարի մշակույթի մնացորդներ, դամբարաններ, սալարկղային թաղումներով: Գյուղի մոտ կան նաև միջնադարյան պատմա-ճարտարապետական հուշարձաններ՝ խաչքարեր, գյուղատեղի «Մոսկոր», Լորուտ գետի վրա կան միջնադարյան երկու կամուրջներ: Գյուղն ունի եկեղեցի՝ «Սուրբ Սարգիս»: Լորուտի մոտ է գտնվում 13-րդ դարի գիտնական Վանական Վարդապետի քարայր ապաստարանը, որտեղ նա ուսուցանում էր իր սաներին:

Գյուղը գտնվում է Մարց գետի աջափնյա լանջին, Ալավերդիքաղաքից մոտ 20 կմ հարավ-արևելք, բլուրների վրա անտառապատ գեղատեսիլ վայրում: Գյուղի հեռավորությունը մայրաքաղաքից 177 կմ է, մարզկենտրոնից՝ 57 կմ, Ալավերդի քաղաքից՝ 38 կմ, համայնքի կենտրոնից՝ 21 կմ: Գյուղի բարձրությունը ծովի մակերևույթից 1500 մետր է:

Բնակավայրը սահմանակից է Մարց, Շամուտ ու Ահնիձոր գյուղերին:

Գյուղիկլիման համեմատաբար մեղմ է: Ագրոկլիմայական տեսակետից գյուղն ընկած է մասնակի ոռոգման գոտում: Բնական լանդշաֆտները լեռնանտառներ են:

ԳՅՈՒՂ ՄԱՐՑ

Մարց գյուղը Լոռու մարզի հնագույն գյուղերից է: Առաջին անգամ գրավոր հիշատակվում է Բենի խաչքարի արձանագրությունում (1211թ.): 1967թ. հնագետների խումբը՝ Ա. Քալանթարյանի գլխավորությամբ, Մարցի շրջակայքում հետազոտություններ կատարելիս, պարզել է, որ գյուղի շրջակայքում դեռևս 3000 տարի առաջ եղել են մարդկանց բնակավայրեր:

Մարցի տարածքում կան պատմաճարտարապետական բազմաթիվ հուշարձաններ: Գյուղից 5 կմ դեպի հարավ-արևելք գտնվում է Իգատակի վանքը (1255թ.), գյուղի մեջ՝ Սուրբ Նշան եկեղեցին: Շրջակայքում կան քսանից ավելի ավերակ գյուղատեղիներ (Իգատակ, Արփաթալա, Ջազիտներ, Դեղձուտ և այլն), մատուռներ (13-14-րդ դարեր), խաչարձաններ (13-րդ դար), խաչքարներով հարուստ գերեզմանոցներ (13-17-րդ դարեր) և միջնադարյան կամուրջներ (Մոսկորի, Ջուխտակ, Լորի):

Գյուղի ներկայիս բնակիչների նախնիների հիմնական մասը այստեղ հաստատվել է Արցախից, Կարսից, Օձունից և այլ վայրերից:

Մարցում են ծնվել ԽՍՀՄ հերոս Աշխարհաբեկ Սարգսի Ղազարյանը և Սոցիալիստական աշխատանքի հերոս Արշակ Շամիրի Ղազարյանը:

Գյուղը գտնվում է Թումանյան քաղաքից 16 կմ հարավ-արևելք, Մարցի սարավանդին, Մարցգետի աջ ափին, ծովի մակերևույթից 1050 մ բարձրության վրա: Գյուղի կլիման մեղմ է, բարեխառն: Ձմեռը չափավոր մեղմ է, համեմատաբար տաք, անկայուն ձյունածածկույթով: Ամառը տաք է, երկարատև: Մարցի տարածքի բնական բուսածածկն անտառային է: Բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաքից 164 կմ է, մարզկենտրոնից՝ 44 կմ, տարածաշրջանային կենտրոն Ալավերդի քաղաքից՝ 25 կմ, համայնքի կենտրոնից՝ 8 կմ:

Բնակավայրը սահմանակից է Լորուտ, Դսեղ, Քարինջ գյուղերին:

Գյուղի տարածքով է անցնում Ալավերդու հանքաբեր գոտու Մարցիգետ-Պրիվոլնոյե ենթագոտու մի մասը, որը հարուստ է անագի հանքավայրերով: Մարցի շրջակայքում կա ոսկու բազմամետաղային խոշոր հանքավայր:

ԳՅՈՒՂ ՇԱՄՈՒՏ

Շամուտ գյուղը հիմնադրվել է 1850 թվականին: Գյուղի բնակիչների նախնիների հիմնական մասը այստեղ հաստատվել է Արցախից:

Գյուղի մեջ և նրա շրջակայքում պահպանվել են՝ ամրոց (18-րդ դար), եկեղեցի (17-րդ դար), գյուղատեղի (13-17-րդ դարեր) և Սբ. Սարգիս մատուռ (17-րդ դար):

Գյուղը գտնվում է Գուգարաց լեռներիարևմտյան մասում, Մարցգետի աջափնյա լեռնակողին: Գյուղի հեռավորությունը մայրաքաղաքից 180 կմ է, մարզկենտրոնից՝ 59 կմ, տարածաշրջանային կենտրոն Ալավերդի քաղաքից՝40 կմ, համայնքի կենտրոնից՝ 23 կմ: Գյուղի բարձրությունը ծովի մակերևույթից 1560 մետր է:

Բնակավայրը սահմանակից է Լորուտ և Աթան գյուղերին:

Գյուղի կլիման ձմռանը ցրտաշունչ է, ամռանը՝ զով: Գյուղում հաճախակի են չորային տարիները:

Բնակավայրի տարածքում կան ածխի հանքավայրեր, որոնք չեն շահագործվում:

ԳՅՈՒՂ ՔԱՐԻՆՋ

Քարինջ գյուղը հիմնադրվել է 1841 թվականին: Գյուղի բնակիչների նախնիների հիմնական մասը այստեղ հաստատվել է Արցախից:

Գյուղը գտնվում է Չաթինդաղ լեռան ստորոտում, ծովի մակերևույթից 1230 մ բարձրության վրա: Գյուղն իր գեղեցիկ աշխարհագրական դիրքով և գեղատեսիլ բնությամբ արժանացել է հայ մեծ նկարիչ Մարտիրոս Սարյանի վրձնին (1952թ.), այդ նկարը պատկերված է հայկական 5-հազարանոց թղթադրամի վրա:

Գյուղի կլիման ձմռանը ցրտաշունչ է, ամռանը՝ զով: Գյուղում հաճախակի են չորային տարիները, որից մեծապես տուժում են գյուղատնտեսական աշխատանքները:

Բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաքից 164 կմ է, մարզկենտրոնից՝ 44 կմ, տարածաշրջանային կենտրոնից՝25 կմ, համայնքի կենտրոնից՝ 8 կմ: Բնակավայրը սահմանակից է Թումանյան քաղաքին և Մարց, Դսեղ ու Ակներ գյուղերին:

Գյուղի տարածքում կան բազալտի հանքավայրեր:

ԳՅՈՒՂ ԴՍԵՂ

Ամենայն հայոց բանաստեղծն այսպես է բնութագրել իր հայրենի գյուղը. «Դսեղը յուր անառիկ ու չքնաղ դիրքով նման է մի բնակերտ ամրոցի: Նրա փոքրիկ հարթավայրը շրջափակված ու ամրացված է հարավից՝ անտառապատ սարերով, իսկ մնացած երեք կողմերից՝ խոր ձորերով:

Դսեղը գտնվում է ՀՀ Լոռու մարզում, Դեբեդ գետի աջափնյա սարահարթի վրա: Բնակավայրի հեռավորությունը Վանաձոր մարզկենտրոնից 30 կմ է, Երևանից՝ 150 կմ, միջպետական նշանակության Երևան-Թբիլիսի մայրուղու Վանաձոր-Ալավերդի հատվածից՝ 8 կմ, Երևան-Թբիլիսի երկաթուղու «Թումանյան» կայարանից՝ 10 կիլոմետր է: Գյուղը հյուսիսից սահմանակցում է Քարինջի, Թումանյանի և Ծաթերի համայնքային հողերին, արևելքից՝ Դսեղի անտառտնտեսության, իսկ արևմուտքից՝ Գուգարքի անտառտնտեսության հողերին: Համայնքի վարչական տարածքը գտնվում է ծովի մակերևույթից 829-2186 մ բարձրության վրա, որը և հանգեցրել է կլիմայական պայմանների ընդգծված տարբերության ներքին, միջին և վերին հատվածներում: Ըստ Օձունի օդերևութաբանական կայանի գրանցումների՝ առավելագույն և նվազագույն ջերմաստիճանները հունվարին կարող են լինել +18, -28, մայիսին՝ +32, -3, օգոստոսին +37, +3, հոկտեմբերին +31, -10 աստիճան: Դսեղի հանդի սահմանները հարավից սկսվում են բարձր լեռներով, հյուսիսում վերջանում են խոր ձորերով: Դսեղն աչքի է ընկնում համեմատաբար մեղմ և խոնավ կլիմայով: Տարվա մեծ մասը գյուղը ենթարկվում է Միջերկրական և Սև ծովերի խոնավ օդային զանգվածների հոսքին, որոնք բերում են առատ տեղումներ: Տեղումների քանակը մեծ է մայիս-հունիս ամիսներին: Ամռանը և աշնան երկրորդ կեսին Դսեղում գերակշռում է ցածր խոնավությամբ տաք օդը: Դսեղը Հայաստանի հնագույն և հանրահայտ գյուղերից է: Գոյություն ունի Դսեղ անվան ստուգաբանության հետ կապված երկու

տարբերակ. Դսեղ նշանակում է դուրս տեղ, այսինքն՝ բնակավայրից զատված, առանձնացված տեղ, բ/ ըստ ավանդագրույցի՝ ձորի գյուղերից տարբերելու համար սարահարթի գյուղը կոչել են Դրսի գեղ կամ Դսեղ: Գյուղն, ըստ գիտական հիմնավորումների, հիմնադրվել է դեռևս մ.թ.ա.: Գյուղի շրջակայքում կան քարանձավներ՝ Դռնավոր էրը, Ծակ քարը և գյուղից Ձորագետ իջնելու Մուտի աջ կողմի ցածր քարայրը, որոնք հնագույն ժամանակներում մարդիկ օգտագործել են որպես կացարան, իսկ հետագայում օգտագործվել են միայն անասունների համար: Դսեղ անունն առաջին անգամ հիշատակվում է 15-րդ դարի սկզբին: Հակոբ Գ Սսեցի կաթողիկոսը 1404-1411թթ. Դսեղը հիշատակում է սանահինի հարկատուների ցուցակում:

Գյուղը հարուստ է բազմապիսի հուշարձաններով՝ վանքային համալիրներ, եկեղեցիներ, մատուռներ, խաչքարեր, կոթողներ, կացարանների մնացորդներ, միջնադարյան գերեզմանոցներ և այլն: Գյուղի անցյալը սերտորեն կապվում է Մամիկոնյան նշանավոր տոհմի շինարարական և բարենորոգչական գործունեության հետ: Գյուղի տարածքում կան բազմաթիվ արժեքավոր խաչքարեր, մատուռներ, եկեղեցիներ: 19-րդ դարի II կեսի պեղումների և 1967-69թթ. գյուղի ներկայիս կենտրոնի կառուցապատման աշխատանքների ժամանակ հայտնաբերվել են Ք. ա. X-IXդ.դ. և VIII-VI դդ. գերեզմաններ և բրոնզե դարի կենցաղային իրեր: Պահպանվել են նաև վաղ միջնադարին վերագրվող բաղնիքի խճանկար հատակը, բազիլիկ եկեղեցու (654թ.) ավերակները՝ ազգագրական թանգարանով, Մամիկոնյան իշխանների հիմնադրած և XIXդ. վերակառուցված Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, խաչքարերով և կոթողով գերեզմանատունը (VII-XIIIդ.դ.), խաչարձաններ (XIդ.): Գյուղի անմիջական հարևանությամբ են գտնվում Քառասունից Մանկանց (X-XIդ.դ.), և Մամիկոնյանների հիմնադրած Բարձրաքաջ Ս. Գրիգոր (XII-XIIIդ.դ.) վանքերը, Սիրուն խաչ խաչքարը (XIIIդ.): Գյուղում գտնվող գերեզմանատանը կան բազում այլ խաչքարեր, հուշակոթող և 7-րդ դարի մի փոքր բազիլիկ եկեղեցու ավերակները: Գյուղի տարածքում կա չորս մատուռ, որից կանգուն են մնացել Սբ. Սարգիս և Դդի գլխի Բալա Գիքորի կառուցած մատուռները:

Դսեղը մեծանուն հայ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի (1869-1923) ծննդավայրն է, և նրա հայրենի տանը գործում է վերջինիս տուն-թանգարանը: Գյուղի կենտրոնում վեր է խոյանում բրոնզաձույլ արձանը (հեղինակ Ղ. Չուբարյան): Գյուղի կենտրոնում՝ Թումանյանի տուն թանգարանի հարևանությամբ գտնվում է գործող եկեղեցին: Սկզբնական շինությունից մնացած մասերը վերագրվում են VII դարին: Եկեղեցին մի քանի անգամ վերանորոգվել է, իսկ 20-րդ դարի սկզբին վերակառուցվել է: Գյուղի հարավ-արևելքում գտնվող Ծովաքար կոչվող սարի ստորոտում է գտնվում «Ծովեր» կոչվող գեղեցիկ լիճը: Խորհրդային շրջանում այն մտնում էր ոռոգման համակարգի մեջ:

ԳՅՈՒՂ ՉԿԱԼՈՎ

Չկալով համայնքը հիմնադրվել 1850 թվականին գուգարաց Սադուն իշխանի կողմից՝ ամրությունների նպատակով:

Չկալով համայնքը գտնվում է ՀՀ Լոռու մարզի նախկին Թումանյանի շրջանի վարչական տարածքում : Երևան-Վանաձոր-Թբիլիսի մայրուղոց հեռավորությունը 8 կմ է: Գյուղը գտնվում է Վանաձոր-Ալավերդի մայրուղու միջնամասում: Բնակավայրի հեռավորությունը Վանաձոր մարզկենտրոնից 30 կմ է, Ալավերդուց՝ 30 կմ:

Երևանից՝ 150 կմ, Գյումրիից՝ 90կմ, Թբիլիսիից՝ 130կմ, միջպետական նշանակության Երևան-Թբիլիսի մայրուղու Վանաձոր-Ալավերդի հատվածից՝ 8 կմ, Երևան-Թբիլիսի երկաթուղու «Թումանյան» կայարանից՝ 10 կիլոմետր է:

Համայնքի վարչական տարածքը գտնվում է ծովի մակերևույթից 1450 մ բարձրության վրա, որը և հանգեցրել է կլիմայական պայմանների ընդգծված տարբերության ներքին, միջին և վերին հատվածներում: Գյուղը գյուղատնտեսության համար ռիսկային գոտի է. հողերը չեն ոռոգվում, տարվա ընթացքում տեղումները անհամաչափ են: Գյուղատնտեսությանը մեծ վնաս են հասցնում կարկտահարումները, ցրտահարումները, երաշտները: Ըստ Օձունի օդերևութաբանական կայանի գրանցումների՝ առավելագույն և նվազագույն ջերմաստիճանները հունվարին կարող են լինել +18, -28, մայիսին՝ +32, -3, օգոստոսին +37, +3, հոկտեմբերին +31, -10 աստիճան:

Համայնքում ներկայումս գործում է հիմնական դպրոց,բուժկետ ,հեռուստակայան: Գյուղում կա եկեղեցի,հուշարձաններ,բազմաթիվ խաչքարեր:

1.2 ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Համայնքի առկա բնակչության թիվը կազմում է 6364 մարդ, այդ թվում տղամարդիկ՝ 3119 և կանայք՝ 3245: Ըստ բնակավայրերի համայնքի բնակչության տարիքային և սոցիալական կազմը բերված է **աղյուսակ 2-ում**:

Աղյուսակ 2. Համայնքի առկա բնակչության տարիքային և սոցիալական կազմի ցուցանիշները(01.01.2022 թ. դրությամբ)

Հ / հ	Ցուցանիշները	Ընդամենը համայնք	ք.Թումանյան, գ. Քոբեր կայարանի	գ.Աթան	գ.Ահնիձոր	գ.Լորուտ	գ.Մարց	գ.Շամուտ	գ.Քարինջ	Գ. Դսեղ	Գ. Չկալով
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1.	Առկա բնակչության թիվը, այդ թվում՝	6364+	1620+	204+	195+	784 +	513 +	236+	604+	2043+	165+
	Տղամարդիկ	3119	780	104	109	380	254	117	283	1017	75
	Կանայք	3245	840	100	86	404	259	119	321	1026	90
	0-6 տարեկան , այդ թվում՝	405	88	16	8	31	38	13	62	135	14
	- 0-3 տարեկան	236	56	5	3	18	22	6	30	89	8
	- 3-6 տարեկան	187	32	6	4	13	28	7	45	46	6
	7-17 տարեկան	637	143	31	20	76	58	32	69	195	13
	18-63 տարեկան	4393	1187	154	117	561	356	148	313	1419	138
	63-ից բարձր տարեկան	1035	202	42	45	108	70	48	77	378	27

2.	Կենսաթոշակառուներ, այդ թվում՝	1032	202	42	45	115	53	48	115	378	34
	Տարիքային և աշխատանքային	1053	228	42	29	115	89	47	96	378	29
3.	Փախստականներ	0	0	0	0	0	0	0	0	0	0
4.	Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	34	4	2	0	8	5	5	4	6	0
5.	Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ	0	0	0	0	0	0	0	0	0	0
6.	Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ	1	1	0	0	0	0	0	0	0	0
7.	Արցախյան պատերազմի մասնակիցներ	29	5	0	1	0	6	0	0	15	3
8.	Հաշմանդամներ, այդ թվում՝	159	73	6	5	18	5	3	19	25	5
	Մանկուց հաշմանդամներ	27	4	2	3	2	5	1	2	6	2
9.	Աշխատունակներ	4530	1474	159	137	547	341	107	350	1365	50
10.	Զբաղվածներ	3062	205	132	109	519	220	97	285	1405	90
11.	Գործազուրկներ, այդ թվում՝	2076	1269	9	15	56	299	10	65	350	3
	Գրանցված	149	50	0	3	13	12	4	45	19	3
12.	Առկա տնային տնտեսությունների թիվը	3207	426	75	56	229	165	60	144	668	59
13.	Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը, այդ թվում՝	246	78	0	15	29	18	15	38	49	4
	Նպաստառու ընտանիքների թիվը	187	61	0	6	13	15	8	33	47	4
14.	Հայրենական մեծ և արցախյան պատերազմներում զոհվածների ընտանիքների թիվը	12	6	0	0	0	6	0	0	26	3
15.	Բնակարանի կարիքավոր ընտանիքների թիվը, այդ թվում՝	70	35	2	5	1	0	0	12	15	0
	Անօթևան ընտանիքներ	0	0	0	0	0	0	0	0	0	0

1 6 .	Բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքների թիվը	184	35	4	4	13	25	11	12	65	15
1 7.	Արտագնա աշխատանքի մեկնող ունեցող տնային տնտեսությունների թիվը	170	53	3	5	17	8	5	61	17	1
1 8 .	Արտագնա/սեզոնային/ աշխատանքի մեկնողների թիվը	308	68	4	8	21	12	10	115	69	1

1.3 ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

2021թ. դեկտեմբերին կայացած ՏԻՄ-երի ընտրությունների արդյունքում ընտրվել են համայնքի ավագանին՝ բաղկացած 15 անդամից: Ավագանու մեջից օրենքի ուժով ընտրվել է համայնքապետ: Ձևավորվել է համայնքի աշխատակազմը՝ բաղկացած 43 աշխատակցից: Համայնքի ավագանին 2022 թվականի դեկտեմբերի 1-ի թիվ 3-Ա որոշմամբ հաստատել է համայնքի ղեկավարի վարձատրության չափը, համայնքի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

- Համայնքի ղեկավար - 1 միավոր, 421,0 հազ. դրամ,
 - Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ - 1 միավոր, 330,0 հազ. դրամ,
 - Համայնքի ղեկավարի խորհրդական- 1 միավոր, 296,0 հազ դրամ
 - Բնակավայրի վարչական ներկայացուցիչ Դսեղ- 1 միավոր, 198,0 հազ. դրամ,
 - Բնակավայրի վարչական ներկայացուցիչ Լորուտ, Քարինջ Մարց- 3 միավոր, 471,0 հազ. դրամ,
 - Բնակավայրի վարչական ներկայացուցիչ Աթան, Ահնիծոր, Շամուտ, Չկալով- 4 միավոր, 580,0 հազ. դրամ,
 - Համայնքի ղեկավարի օգնական - 2 միավոր, 325,0 հազ. դրամ,
 - աշխատակազմի քարտուղար - 1 միավոր, 297,0 հազ. դրամ,
 - գլխավոր մասնագետ –հաշվապահ- 1 միավոր, 250,0 հազ. դրամ,
 - առաջատար մասնագետ - 2 միավոր, 280,0 հազ. դրամ,
 - առաջին կարգի մասնագետ - 7 միավոր, 945,0 հազ. դրամ,
 - երկրորդ կարգի մասնագետ - 13 միավոր, 1430,0 հազ. դրամ,
 - վարորդ - 1 միավոր, 132,0 հազ. դրամ,
 - վարորդ միկրոավտոբուսի- 1 միավոր, 94,0 հազ. դրամ
 - Գործավար- 1 միավոր, 92.617 հազ. դրամ
 - Փորձագետ- 1 միավոր, 92.617 հազ. դրամ
 - հավաքարար - 1,5 միավոր, 138.9 հազ. դրամ:
- Ընդամենը՝ 42,5 միավոր, 6,373,134 դրամ:**

Համայնքի ավագանին 2022 թվականի հունվարի 18-ի թիվ 10-Ա որոշմամբ հաստատել է 6 համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների (ՀՈԱԿ) աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

1. «Թումանյան քաղաքի նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ, 14 աշխատակից՝

- տնօրեն - 1 միավոր, 135,0 հազ. դրամ,
- մեթոդիստ, ուսումնական գծով տնօրենի տեղակալ- 0,5 միավոր, 55,0 հազ. դրամ
- գլխավոր հաշվապահ - 0,5 միավոր, 70,0 հազ. դրամ,
- դաստիարակ նախակրթարանի- 2,5 միավոր, 231,545 դրամ
- դաստիարակ - 1,12 միավոր, 123,2 հազ. դրամ,
- դաստիարակի օգնական- 1 միավոր, 92.618 դրամ
- երաժիշտ դաստիարակ - 0,5 միավոր, 55,0 հազ. դրամ,
- խոհարար - 1 միավոր, 92.618. դրամ,
- հավաքարար - 0,5 միավոր, 46,3 դրամ,
- օժանդակ –բանվոր- 0,5 միավոր, 78,0 հազ. դրամ:

Ընդամենը՝ 7,62 միավոր, 979.273 դրամ:

2. «Լորուտ գյուղի նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ,6 աշխատակից՝

- տնօրեն - 1 միավոր, 120,0 հազ. դրամ,
- գլխավոր հաշվապահ - 0,5 միավոր, 46.309 դրամ,
- դաստիարակ - 1,12 միավոր, 123,0 հազ. դրամ,
- դաստիարակի օգնական- 1 միավոր, 92.618 դրամ
- խոհարար - 1 միավոր, 92.618 դրամ,
- հավաքարար- 0,5 միավոր, 46.309. դրամ:

Ընդամենը՝ 5,12 միավոր, 520.854 դրամ:

3. «Դսեղ գյուղի նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ,6 աշխատակից՝

- տնօրեն - 1 միավոր, 120,0 հազ. դրամ,
- գլխավոր հաշվապահ - 0,5 միավոր, 46.309 դրամ,
- դաստիարակ - 1,12 միավոր, 123,0 հազ. դրամ,
- դաստիարակի օգնական- 1 միավոր, 92618 դրամ
- խոհարար - 1 միավոր, 92618 դրամ,
- պահակ- 0,5 միավոր, 46,309. դրամ:

Ընդամենը՝ 5,12 միավոր, 520.854 դրամ:

4. «Քարինջ գյուղի նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ, 6 աշխատակից՝

- տնօրեն - 1 միավոր, 120,0 հազ. դրամ,
- գլխավոր հաշվապահ - 0,5 միավոր, 46.309 դրամ,
- դաստիարակ - 1,12 միավոր, 123,0 հազ. դրամ,
- դաստիարակի օգնական- 1 միավոր, 92618 դրամ
- խոհարար - 1 միավոր, 92618 դրամ,

- պահակ- 0,5 միավոր, 46,309. դրամ:
Ընդամենը՝ 5,12 միավոր, 520.854 դրամ:

5. «Թումանյան համայնքի կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ, 26 աշխատակից՝

- տնօրեն - 1 միավոր, 150,0 հազ. դրամ,
 - տնօրենի տեղակալ, ավտոպարկի պատասխանատու- 135,0 հազ. դրամ
 - հաշվապահ - 1 միավոր, 102,0 հազ. դրամ,
 - վարորդ աղբատարի- 1 միավոր, 95,0 հազ. դրամ,
 - վարորդ հնքնաթափի- 1 միավոր, 95,0 հազ. դրամ,
 - վարորդ տրակտորի- 1 միավոր, 120,0 հազ. դրամ,
 - պահակ ավտոպարկի- 3 միավոր, 300,0 հազ. դրամ
 - բանվոր - 9 միավոր, 833.562 դրամ,
 - հավաքարար- 1 միավոր, 92618 դրամ:
Ընդամենը՝ 19 միավոր, 1923.180 դրամ:

5. «Թումանյան քաղաքի մանկական արվեստի դպրոց» ՀՈԱԿ, 6 աշխատակից՝

- տնօրեն - 1 միավոր, 115,0 հազ. դրամ,
 - գլխավոր հաշվապահ - 0,5 միավոր, 70,0 հազ. դրամ,
 - դաշնամուրի դասատու - 1 միավոր, 92.618 դրամ,
 - դաշնամուրի դասատու - 1 միավոր, 92.618 դրամ,
 - նկարչության դասատու- 1 միավոր, 92.618 դրամ,
 - հավաքարար - 1 միավոր, 92.618 դրամ:
Ընդամենը՝ 5,5 միավոր, 555.472 հազ. դրամ:

Համայնքի աշխատակազմի կառավարման կազմակերպական կառուցվածքը բերված է **հավելված 1-ում:**

1.4 ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Համայնքի սեփականությունն են հանդիսանում նրա կազմի մեջ մտնող նախկին համայնքների սեփականություն համարվող գույքը, որի ցանկը սահմանվել է ՀՀ կառավարության 14.03.1997թ. թիվ 51 որոշմամբ:

Համայնքի սոցիալ-տնտեսական յուրաքանչյուր ենթակառուցվածքի վիճակի գնահատումը կատարվել է՝ օգտագործելով **Ներդիր 1-ում** բերված գնահատման չափանիշները (գնահատականները):

Ներդիր 1. Համայնքի սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքի վիճակի գնահատականներ

- ա) գերազանց, եթե ենթակառուցվածքը վերջերս է կառուցվել կամ վերանորոգվել, գործում է անխափան.
- բ) լավ, եթե ենթակառուցվածքն իր շահագործմանը խոչընդոտող լուրջ թերություններ չունի.
- գ) բավարար, եթե ենթակառուցվածքը դեռևս գործում է, բայց արդեն կապիտալ նորոգման կարիք ունի.
- դ) վատ, եթե ենթակառուցվածքը գործում է ամենացածր արտադրողականությամբ կամ բոլորովին չի գործում.
- ե) շատ վատ, եթե ենթակառուցվածքը քայքայված է, այն պետք է քանդել կամ փոխարինել ուրիշով:

Հավելված 2-ում բերված է 01.06.2020թ. դրությամբ համայնքի սեփականություն համարվող գույքի ցանկը և վիճակը՝ ըստ առանձին բնակավայրերի: Ի լրումն սրան, բերված է նաև համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերում սոցիալ-տնտեսական հիմնական ենթակառուցվածքների առկայությունը և վիճակը:

1.5 ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՈՉ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համայնքի վարչական տարածքում գործող պետական կազմակերպություններն են՝ Թումանյանի, Լորուտի, Մարցի, Քարինջի Դսեղի միջնակարգ, Աթանի, Ահնիձորի, Չկալովի և Շամուտի հիմնական դպրոցների ՊՈԱԿ-ները, «Թումանյանի առողջության կենտրոն» ՊՓԲԸ-ն, որը սպասարկում է նաև Քարինջի բուժական կաբարձական կետը (ԲՄԿ): Լորուտի, Մարցի, Աթանի, Ահնիձորի և Շամուտի ԲՄԿ-ները սպասարկվում են «Դսեղի առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից, «Դսեղի առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ը որը սպասարկում է նաև Չկալով բնակավայրը, Հայանտառ ՊՈԱԿ-ի Դսեղի անտառպետությունը, որը սպասարկում է ամբողջ Թումանյան համայնքը: Այդ կազմակերպությունների հետ նախկին համայնքների ՏԻՄ-երն արդյունավետորեն համագործակցել են, արվել է հնարավորը կրթության և առողջապահության ոլորտներում ծառայությունների արդիականացման և արդյունավետության բարձրացման նպատակով:

Համայնքում չկան գործող ոչ կառավարական կազմակերպություններ (ՀԿ-ներ, հիմնադրամներ և այլն): Քաղաքական կուսակցություններից համայնքի վարչական տարածքում գործում են, ՔՊ-ն, Հանրապետություն և ՀՀԿ կուսակցությունները:

Բացի Թումանյան և Չկալով բնակավայրերից, համայնքի մնացած բնակավայրերում գործում են «Արոտօգտագործողների սպառողական կոոպերատիվ»-ները, որոնք մատուցում են գյուղատնտեսական աշխատանքների ծառայություններ, հատկապես՝ խոտհնձի:

Համայնքի Աթան, Ահնիձոր, Լորուտ, Շամուտ և Չկալով բնակավայրերում չկան գործող ոչ համայնքային ենթակառուցվածքային կազմակերպություններ:

Թումանյան քաղաքում կան ոչ համայնքային ենթակառուցվածքային արտադրական 6 կազմակերպություններ՝

- «Հրակայուն նյութերի գործարան» ԲԲԸ, չի աշխատում
- «Գամարին» ՓԲԸ, չի աշխատում,
- ՀԷԿ «Արգիշտի-1» ՍՊԸ, աշխատողների թիվը՝ 19,
- «Ձաղիձորգագ» ՍՊԸ, աշխատողների թիվը՝ 12,
- «Արա Զավարյան» ԱԶ, աշխատողների թիվը՝ 6,
- «Հույսի Շող» ՍՊԸ, թեթև արդյունաբերության ոլորտ, աշխատողների թիվը՝ 4:

Մարց գյուղում ոչ համայնքային ենթակառուցվածքային կազմակերպություններն են՝

- «Մարցէներջի» ՍՊԸ-ի «Մարցիգետ» ՓՀԷԿ, աշխատողների թիվը՝ 14,
- «Այուդա- Լոս» ՍՊԸ-ի «Պոզիտրոն» ՓՀԷԿ, աշխատողների թիվը՝ 9:

Քարինջ գյուղում կան ոչ համայնքային ենթակառուցվածքային արտադրական 4 առևտրային կազմակերպություններ՝

- «Կարեն Հարությունյան» ա/ձ, արտադրում է քարեսալիկներ, աշխատողների թիվը՝ 2,

Լորուտ գյուղում «Արոտ օգտագործողների սպառողական կոոպերատիվ»-ի կազմում մասամբ գործում է նաև կաթի մթերման կետ՝ 2 աշխատողներով:

Չկալով գյուղում <<Տորգ սերվիզ>> ՍՊԸ չի գործում

Դսեղ գյուղում ոչ համայնքային ենթակայության առևտրային և արտադրական կազմակերպություններն են՝

- Ա/Ձ <<Արա Գոգինյան>>, աշխատողների թիվը՝ 3:
- Ա/Ձ <<Սոֆյա Բեգլարյան>>, աշխատողների թիվը՝ 2:
- Ա/Ձ <<Գոհար Ղուլինյան>>, աշխատողների թիվը՝ 1:
- Ա/Ձ <<Էլլա Պողոսյան>>, աշխատողների թիվը՝ 2:
- Ա/Ձ <<Գայանե Զաքարյան>>, աշխատողների թիվը՝ 1:
- Ա/Ձ <<Թինա Մուրադյան>>, աշխատողների թիվը՝ 1:
- Ա/Ձ <<Լուսինե Սարգսյան>>, WOW Glamping աշխատողների թիվը՝ 6:
- ՍՊԸ <<Կաղնի հյուրատուն>>, աշխատողների թիվը՝ 5:
- Ա/Ձ <<Տարոն Թումանյան>>, փայտամշակման արտադրամաս, աշխատողների թիվը՝ :
- Ա/Ձ <<Արմենակ Հախվերդյան>>, փայտամշակման արտադրամաս, աշխատողների թիվը՝ 2:
- Ա/Ձ <<Գարեգին Առաքելյան>>, փայտամշակման արտադրամաս, աշխատողների թիվը՝ 2:
- Ա/Ձ <<Սոս Վանյան>>, փայտամշակման արտադրամաս, աշխատողների թիվը՝ 2:
- Ա/Ձ <<Գրիգոր Մատոյան >>, փայտամշակման արտադրամաս, աշխատողների թիվը՝ 3:
- Ա/Ձ <<Փաշիկ Խառատյան>>, փայտամշակման արտադրամաս, աշխատողների թիվը՝ 2:
- Ա/Ձ <<Կամո Խառատյան>>, փայտամշակման արտադրամաս, աշխատողների թիվը՝ 1:
- Ա/Ձ <<Գարեգին Առաքելյան>>, փայտամշակման արտադրամաս, աշխատողների թիվը՝ :
- Ա/Ձ <<Արման Հովսեփյան>>, փայտամշակման արտադրամաս, աշխատողների թիվը՝ 1:
- Ա/Ձ <<Նիկալ Դալլաքյան>>, փայտամշակման արտադրամաս, աշխատողների թիվը՝ 1:
- Ա/Ձ <<Շավարշ Շեկոյան>>, քարի արտադրամաս, աշխատողների թիվը՝ 2:
- Ա/Ձ <<Արմեն Դալլաքյան>>, քարի արտադրամաս, աշխատողների թիվը՝ 2:
- Ա/Ձ <<Գուրգեն Եղիկյան>>, քարի արտադրամաս, աշխատողների թիվը՝ 4:

1.6 ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքի բնակավայրերից միայն Թումանյան քաղաքն ունի գլխավոր հատակագիծ, բոլոր բնակավայրերը չունեն քաղաքաշինական ծրագրային այլ փաստաթղթեր (գոտիավորման նախագիծ, քաղաքաշինական կադաստր, քաղաքաշինական

կանոնադրություն և այլն): Բացի Թումանյան և Դսեղ բնակավայրերից, մնացած բնակավայրերը չունեն ջրահեռացման կենտրոնացված համակարգ (կոյուղի): Թումանյան համայնքում կանոնավոր կերպով իրականացվում է աղբահանություն:

Թումանյան համայնքի մոտավորապես 60%-ն ապահովված է փողոցային լուսավորությամբ: Գրեթե բոլոր բնակավայրերի գերեզմանատները ցանկապատերի վերանորոգման կամ մասնակի նորոգման կարիք ունեն:

Ստորև բերված է այս բնագավառում առկա իրավիճակի վերլուծությունը՝ ըստ առանձին բնակավայրերի՝

ՔԱՂԱՔ ԹՈՒՄԱՆՅԱՆ, ՔՈՒԲԵՐ ԿԱՅԱՐԱՆԻ ԳՅՈՒՂ

Քաղաքի բնակելի կառուցապատումը կազմակերպված է երկշաբբ անհատական հողամասերով տներով, հողամասերի չափերը զգալիորեն տարբեր են՝ կենտրոնական հատվածում՝ 400-1000մ², առավել ծայրամասային հատվածներում հասնում են մինչև 3000 մ²:

Հասարակական կառուցապատումը կենտրոնացած է մշակույթի պալատի, բազմաբնակարան բնակելի կառույցներով ձևավորված տարածքի շուրջ:

Քաղաքի գոյություն ունեցող հատակագծային կառուցվածքը պայմանավորված է ռելիեֆային բարդ պայմաններով (մեծ թեքություններ, կտրտվածություն՝ հեղեղատներով): Կառուցապատված են հիմնականում հարթ դարավանդները և քիչ թեք լանջերը: Փողոցային ցանցը կազմակերպված է մեկ հիմնական փողոց-առանցքից ճյուղավորվող կանոնավոր, միմյանց զուգահեռ մոտեցումներով:

Քաղաքի ջրամատակարարումը կատարվում է շուրջօրյա քաղաքն ունի ջրահեռացման կենտրոնացված համակարգ, բայց մաքրման կայանը չի գործում: Ջրամբարների վիճակը բավարար է, բայց ցանկապատված չեն:

Քաղաքի 2-րդ և 3-րդ թաղամասերի խմելու ջրի ջրամատակարարման և ջրահեռացման ներբնակավայրային համակարգերը հանձնվել են «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ին, համաձայն 19.05.2016թ ավագանու 39 Ա որոշմամբ: 1-ին թաղամասի ջրամատակարարումը հանձնված է Ա/

Քաղաքը գազաֆիկացված է, բնակչությունը, մանկապարտեզը և դպրոցն օգտվում են կապույտ վառելիքից:

Քաղաքն ունի աղբատար մեքենա: Աղբահանությունը քաղաքում իրականացվում է շաբաթական 2 անգամ: Աղբավայրը, որը շահագործվել է դեռևս խորհրդային տարիներից, այժմ փակ է: Համայնքը աղբը տեղափոխում է Ալավերդու աղբավայր, համաձայն Թումանյանի քաղաքային համայնքի կոմունալ տնտեսություն ՀՈԱԿ կողմից կնքված պայմանագրի:

Քաղաքի գերեզմանատները ցանկապատված չեն, որի պատճառով անասուններն անարգել մուտք են գործում այդ գերեզմանատների տարածքներ՝ առաջացնելով բնակչության արդարացի դժգոհությունը:

Թումանյան քաղաքում հետզհետե վերականգվել և կառուցվել է գիշերային լուսավորության համակարգը, որը պարբերաբար վերանորոգվում և ընդլայնվում է:

ԳՅՈՒՂ ԱԹԱՆ

Գյուղի ջրամատակարարումն իրականացվում է 2 աղբյուրից, ինքնահոս եղանակով: Ջրամատակարարումը շուրջօրյա է, բնակչության մի մասը ջուր ստանում է թաղամասերում առկա աղբյուր-ծորակներից, մյուս մասը՝ տներում ունեն անհատական ծորակներ: 2007 թ.-ին

ՀՄՆՀ-ի միջոցներով կառուցվել է արտաքին ցանցի 3 կմ-ոց հատվածը: Գյուղի դպրոցը, բուժկետը ջուր չունեն: Գյուղը գազաֆիկացված չէ, աղբահանություն չի իրականացվում:

Բնակավայրում կա 2 գերեզմանատուն, որոնցից մեկը ցանկապատված է մետաղյա ցանցով, որն ունի վերանորոգման կարիք:

Գյուղում 2020թ սուբվենցիոն ծրագրով իրականացվել է ոռոգման ջրագծի ցանցի կառուցում, որը ներկայում բարվոք վիճակում չէ:

Սուբվենցիոն ծրագրով 2019թ Աթան գյուղում մասնակի վերականգնվել է փողոցների գիշերային լուսավորության համակարգը:

2018թ-ից գյուղում գործում է նախակրթարան, որը կառուցվել է Թումանյանի համայնքապետարանի, UNICEF-ի և <<ՔԱՅԼ ԱՌ ՔԱՅԼ>> բարեգործական հիմնադրամի ուժերով:

ԳՅՈՒՂ ԱՎՆԻՁՈՐ

Ինքնահոս եղանակով գյուղ մտնող խմելու ջրի ջրատարը կապիտալ վերանորոգվել է 2001 թվականին «Փրկեք երեխաներին» և ՀՄՆՀ կազմակերպությունների աջակցությամբ, սակայն ներկայումս ջրատարի որոշ հատվածներում կարիք կա ընթացիկ նորոգման: Գյուղի բնակչությունը խմելու ջուր ստանում է բոլոր թաղամասերում տեղադրված աղբյուր-ծորակներից, ջրամատակարարումը շուրջօրյա է: Խմելու ջրով ապահովված է բնակավայրի դպրոցը, վարչական ներկայացուցչի նստավայրը և բուժկետը, որոնց խմելու ջրի համակարգի կառուցման և վերանորոգման աշխատանքները իրականացվել է 2018թ ՀՏՀ-ի օգնությամբ: Օրվա կարգավորիչ ջրամբարը գտնվում է ոչ բարվոք վիճակում, չկան բավարար պայմաններ քլորացում կատարելու համար: Գյուղը գազաֆիկացած չէ, իրականացվում է աղբահանություն:

Բնակավայրում կա 1 գերեզմանատուն, որը ցանկապատված է մետաղյա ցանցով, այն ներկայումս բարվոք վիճակում չէ:

2018թ-ից գյուղում գործում է նախակրթարան, որը կառուցվել է Թումանյանի համայնքապետարանի, UNICEF-ի և <<ՔԱՅԼ ԱՌ ՔԱՅԼ>> բարեգործական հիմնադրամի ուժերով:

Գյուղ Դսեղ

Դսեղ գյուղում խորհրդային տարիներից կառուցված ջրամատակարարման համակարգի միջոցով գյուղը օգտվել է ջրամատակարարման 8-12 ժամյա համակարգից: 2015 թ. կառավարության ֆինանսավորմամբ կառուցվել է 37 կմ երկարությամբ ինքնահոս, ամբողջովին նոր ջրագիծ, որի միջոցով էլ այժմ գյուղն օգտվում է խմելու ջրի համակարգից: Նշյալ ծրագրի շրջանակներում կառուցվել է նաև ամբողջ գյուղի ջրամատակարարման ներքին ցանցը, որը 2022 թ. դրությամբ չի գործում, քանի որ ցանցը պարբերաբար վթարվում է: Հարկ է նշել, որ ներքին ցանցը վատ կատարված կամ անբարեխիղճ աշխատանքի պատճառով, համայնքի ներկայացուցիչների կողմից չի ընդունվել: Գյուղի վերին հատվածում են գտնվում նաև կարգավորիչ ջրամբարները, որոնք վերանորոգվել են, և պարբերաբար տեղի է ունենում մաքրման և քլորացման աշխատանքներ: Հարկ է նշել, որ Դսեղում տուրիզմի զարգացման զուգահեռ մեծածավալ շինարարություն է ընթանում, ինչի արդյունքում ջրի պահանջարկն զգալիորեն ավելացել է:

Բնակավայրն ամբողջովին ապահովված է բնական գազով:

Փողոցային լուսավորության համակարգերը առկա են 5 խոշոր փողոցներում: Սուբվենցիոն ծրագրով համայնքի մշակույթի տան տանիքին տեղադրված է արևային ֆոտովոլտային կայան, որը միացված է համայնքային էներգետիկ համակարգին:

Գյուղում գործում է մանկապարտեզ, սակայն անհրաժեշտ է ստեղծել մանկապարտեզի երկրորդ խումբը, մեծ պահանջարկի պատճառով:

Գյուղն ունի մի քանի գերեզմանատուն, որոնցից 2-ը պատմական նշանակության գերեզմանատներ են, այդ թվում 12-13-րդ դարերի... Սակայն միայն գործող գերեզմանատունն է ցանկապատված:

Գյուղում աղբահանությունն իրականացվում է շաբաթական մեկ անգամ:

Ներքին ճանապարհները հիմնականում խճապատ են, կենտրոնական փողոցը մինչև գերեզմանատուն՝ ասֆալտապատ: 2021 թ. սուբվենցիոն ծրագրով տուֆով սալարկվել են 2-րդ և 10-րդ փողոցները:

ԳՅՈՒՂ ԼՈՐՈՒՏ

Գյուղի ջրամատակարարումն իրականացվում է ինքնահոս եղանակով 2 աղբյուրից, ջրամատակարարման համակարգը կառուցվել է 1964 թվականին, նախկինում մասնակիորեն վերանորոգվել է գյուղապետարանի կողմից: Դրա 3 կմ-ոց հատվածը 2012թ.-ին վերանորոգվել է ՀՀ կառավարության աշխատակազմի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ»-ի միջոցով, արտաքին ցանցի 17 կիլոմետրանոց և ներքնակավայրային ներքին ցանցի 10 կիլոմետրանոց հատվածներն ունեն վերանորոգման կարիք: Ներքին ցանցի մաշվածության պատճառով կորուստը հասնում է 50% -ի: Իսմելու ջրով ապահովված են համայնքի դպրոցը, մանկապարտեզը: Գյուղի բնակչությունը խմելու ջուր ստանում է բոլոր թաղամասերում տեղադրված աղբյուր-ծորակներից կամ մանհատական ծորակներից, օրական մինչև 6 ժամ տևողությամբ:

2019թ Համայնքի և Կառավարության համագործակցությամբ վերանորոգվել է գյուղի ներքին ցանցի մոտ 3 կմ հատվածը և ՀՏՀՀ-ի կողմից վերանորոգվել է արտաքին ցանցի 1.2 կմ հատվածը, սակայն ներկայումս էլ կան խնդիրներ որոնք հետզհետե համայնքի և կառավարության օգնությամբ վերանորոգվում և բարեկարգվում են: Կապտաժները գտնվում են ոչ բարվոք վիճակում: Բնակչության 70%-ն օգտվում է բնական գազից:

Գյուղում աղբահանություն իրականացվում է:

Բնակավայրում կա 1 գերեզմանատուն, որը ցանկապատված է մետաղյացանցով, որը վերանորոգման կարիք ունի:

ԳՅՈՒՂ ՄԱՐՑ

Գյուղի «Արվիաթալա», «Ղջանանց թալա», «Մուրադի ձոր» և «Վիդիշ» հանդամասերից ինքնահոս եկող խմելու ջրի ջրատարը մասնակի վերանորոգվել է, սակայն ներկայումս ջրատարի 6 կմ-ոց ողջ խաղովակաշարը գտնվում է անմխիթար վիճակում, փոխելու կարիք կա: Զրամատակարարման ներքնակավայրային 5 կմ-ոց ցանցը ևս ունի վերանորոգման կարիք: Գյուղի բնակչությունը խմելու ջուր ստանում է բոլոր թաղամասերում տեղադրված աղբյուր-ծորակներից կամ մանհատական ծորակներից, օրական մինչև 12 ժամ տևողությամբ: Իսմելու ջրով ապահովված են բնակավայրի դպրոցը և բուժկետը: Օրվա կարգավորիչ ջրամբարը գտնվում է ոչ բարվոք վիճակում, չկան բավարար պայմաններ քլորացում կատարելու համար:

Մարց գյուղում ՀՏԶՀ-ի կողմից 2018թ վերանորոգվեց մոտ 3կմ խմելու ջրի խողովակները գյուղում վերանորոգվեց ջրամբարը տեղադրվեց նոր ջրբաշխիչ:

2008 թվականին գյուղը գազաֆիկացվել է, գազից օգտվում է բնակչության 50%-ը և դպրոցը, 700 մ գազախողովակի ձեռքբերման դեպքում գազամատակարարումից կօգտվեն ևս 30 տնտեսություն, իսկ գյուղի ամբողջական գազաֆիկացումը մեծապես կնպաստի բնակչության կենցաղային խնդիրների լուծմանը, ինչպես նաև գյուղի անտառային ֆոնդը կփրկվի ոչնչացումից:

Գյուղում աղբահանություն իրականացվում է:

Գյուղում կա 2 գերեզմանատուն, որոնց ցանկապատերը մասնակի վերանորոգման կարիք ունեն, անասունները մուտք են գործում այդ գերեզմանատների տարածքները՝ առաջացնելով բնակչության դժգոհությունը:

2018թ-ից գյուղում գործում է նախակրթարան, որը կառուցվել է Թումանյանի համայնքապետարանի, UNICEF-ի և <<ՔԱՅԼ ԱՌ ՔԱՅԼ>> բարեգործական հիմնադրամի ուժերով:

ԳՅՈՒՂ ՇԱՄՈՒՏ

«Նազանի աղբյուր» հանդամասից ինքնահոս եղանակով խմելու ջրագիծը կառուցվել է 2000 թվականին ՄԱԿ-ի «Սնունդ աշխատանքի դիմաց» ծրագրի աջակցությամբ, սակայն ներկայումս ջրատարի որոշ հատվածներ կարիք ունեն ընթացիկ նորոգման: 2020 թվականին վերանորոգվել է 1,6 կմ-անոց հատվածը: Վերանորոգման կարիք ունի նաև ջրամատակարարման ներքին ցանցը: Գյուղի բնակչությունը խմելու ջուր ստանում է բոլոր թաղամասերում տեղադրված աղբյուր-ծորակներից կամ մանհատական ծորակներից, ջրամատակարարումը շուրջօյա է: Խմելու ջրով ապահովված է բնակավայրի դպրոցը: Բուժկետն ապահովված չէ խմելու ջրով: Օրվա կարգավորիչ ջրամբար գյուղը չունի:

Գյուղը գազաֆիկացված չէ, աղբահանություն չի իրականացվում: Բնակավայրում կա 2 գերեզմանատուն, որոնք ցանկապատված են մետաղյա ցանցով, սակայն դրանք ունեն վերանորոգման կարիք:

Գյուղ Չկալով

Գյուղը նախկինում չի ունեցել հիմնական ջրագիծ: Զրագիծը կառուցվել է 2014 թ.-ից: Ակունքից գյուղ խմելու ջուրը հոսում է ինքնահոս եղանակով: Զրագիծը կառուցվել է Վիվասել-ՄՏՍ և Բարերար Սիլվա Մովսեսյանի ֆինանսական աջակցությամբ: Նույն ծրագրով կառուցվել է գյուղի ջրի ներքին ցանցը:

Գյուղում աղբահանությանը սկսվել է 2022 թ.-ից:

Գյուղում կա 2 գերեզմանատուն, որոնցից գործողը ցանկապատված է քարե պարիսպով, իսկ հին գերեզմանատան ցանկապատը՝ վերանորոգման կարիք ունի:

Գյուղում փողոցային լուսավորությունը հիմնականում ամբողջությամբ առկ է, սակայն կա որոշակի վերանորոգման և ավելացման կարիք:

Գյուղի փողոցները խճապատ են և գտնվում են բարվոք վիճակում:

2020 թ. սուբվենցիոն ծրագրով, բարերարի աջակցությամբ իրականացվել է գյուղի գազատարի կառուցումը, որը շահագործման կհանձնվի 2022 թվականին:

Գյուղի «Բոխուտ-թալա» հանդամասից ինքնահոս եկող խմելու ջրի ջրատարը կապիտալ նորոգվել է 2004 թվականին՝ ՀՄԼՀ-ի աջակցությամբ, սակայն ներկայումս ջրատարի որոշ հատվածներում կարիք կա ընթացիկ նորոգման: Բնակավայրի բնակչությունը խմելու ջուր ստանում է բոլոր թաղամասերում տեղադրված աղբյուր-ծորակներից կամանհատական ծորակներից, օրական մինչև 6 ժամ տևողությամբ: Խմելու ջրով ապահովված են նաև համայնքի դպրոցը, մանկապարտեզը և բուժկետը: Կապտածները գտնվում են ոչ բարվոք վիճակում:

Բնակավայրը ապահովված է նաև տեխնիկական ջրով, որի «Ջարդուտ» հանդամասից եկող ջրատարը հիմնովին վերանորոգվել է 2012 թվականին՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության ԾԻԳ-ի աջակցությամբ: Ներկայումս բնակավայրի գրեթե յուրաքանչյուր տնային տնտեսություն ապահովված է բավարար քանակությամբ տեխնիկական ջրով: 2018թ Քարինջ գյուղում ՀՏՁՀի օգնությամբ վերանորոգվեց գյուղի արտաքին ջրագծի մոտ 2,2կմ հատվածը, սակայն ներկայումս էլ կան խնդիրներ, որոնք համայնքի ուժերով հետզհետե կբարելավվեն:

2008 թվականին Մարց գյուղից մինչև Քարինջ գյուղի կենտրոն անցկացվել է գազատար, իսկ 2011 թվականին այն շարունակվեց և հասցվեց մինչև գյուղի դպրոց: Սակայն, բնակավայրի բնակչությունը և դպրոցն առայժմ կապույտ վառելիքից չեն օգտվում: Բնակավայրի ամբողջական գազաֆիկացումը մեծապես կնպաստի բնակչության կենցաղային խնդիրների լուծմանը, ինչպես նաև բնակավայրի անտառային ֆոնդը կփրկի ոչնչացումից: Բնակավայրի գազամատակարարման ներքին ցանց անցկացնելու դեպքում նրա երկարությունը կկազմի մոտ 2 կմ:

Քարինջ բնակավայրում աղբահանություն չի իրականացվում: Բնակավայրը չի ունեցել աղբատար մեքենա, առանձին հատկացված աղբավայր:

Գյուղում կա 3 գերեզմանատուն, որոնցից «Խաչի հողեր» կոչվող տարածքի գերեզմանատունը ցանկապատված է մետաղյա ցանցով, իսկ մյուս երկուսը ցանկապատված չեն: Ներկայումս «Վերևի թաղի» գերեզմանատունը համարվում է փակ:

1.7 ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Համայնքում բազմաբնակարան բնակելի շենքեր կան միայն Թումանյան քաղաքում, մնացած բնակավայրերում կան միայն բնակելի առանձնատներ: Քաղաքի բազմաբնակարան բնակելի շենքերի թիվը 100 է, որոնցից՝ մեկ հարկանի՝ 75, երկու հարկանի՝ 14, երեք հարկանի՝ 11 շենք (ընդամենը՝ 476 բնակարան): Բնակֆոնդի ընդհանուր մակերեսը կազմում է 48747,62քմ, որից՝ 1743.6 քմ-ը համայնքային սեփականություն է: Համայնքում կիսակառույց բազմաբնակարան բնակելի շենքերի թիվը 2 է, առանձնատների թիվը՝ 155, բնակարանի կարիքավոր ընտանիքների թիվը՝ 35:

Բնակելի առանձնատների թիվը և դրանց ընդհանուր մակերեսը համայնքի մյուս բնակավայրերում կազմում են՝

- Աթանում՝ 130 տուն, մոտ 13000քմ,
- Ահնիձորում՝ 101 տուն, մոտ 10000 քմ,
- Լորուտում՝ 289 տուն, մոտ 32000քմ,
- Մարցում՝ 128 տուն, մոտ 11520 քմ,
- Շամուտում՝ 64 տուն, մոտ 6400քմ,
- Քարինջում՝ 170 տուն, մոտ 17000 քմ:
- Չկալով՝ 94 տուն, մոտ 1550քմ:
- Դսեղ՝ 793, մոտ 43260 քմ:

Համայնքի առանձնատների մեծ մասը վերանորոգման կարիք ունեն, նորաբաժան ընտանիքների համար անհրաժեշտ են նոր առանձնատներ: Սակայն, բնակչության սոցիալական վատ պայմանների պատճառով առանձնատների վերանորոգման աշխատանքներ կատարվում են միայն խիստ անհրաժեշտության դեպքերում, իսկ նոր առանձնատներ համարյա չեն կառուցվում: Միայն Դսեղ բնակավայրում է, որ տուրիզմի ո,

1.9 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքում չկա գյուղատնտեսական նշանակության հողերի ոռոգման համակարգ, այդ պատճառով համայնքի բնակչությունը հողագործությունից մեծ եկամուտներ չի կարողանում ստանալ: Միայն Դսեղ բնակավայրում է, որ մի քանի գյուղատնտեսներ արդեն իսկ հիմնել են ինտենսիվ այգիներ, սեփական միջոցներով անց կացնելով ոռոգման համակարգ: Դսեղի վարելահողերի մեծ մասը իրենց կարգով դասվում են ոռոգելի հողերի ցանկում, որի մի փոքր հատվածն է միայն մշակվում: Համայնքում ավելի զարգացած է անասնապահության ճյուղը: Սակայն, դրա հետագա զարգացման համար համայնքում խոտհարքների տարածքները չեն բավականեցնում, այդ պատճառով համայնքի վարելահողերն աստիճանաբար վերածվել են խոտհարքների կամ բնակչությունն անասնակերի մի մասը ստիպված է լինում գնել հարևան համայնքներից:

2012 թվականին պետության կողմից իրականացվել է համայնքի տարածքի գյուղական բնակավայրերի արոտավայրերի ջրարբիացման աշխատանքներ, որոնք իրենց դրական ազդեցությունը թողեցին թե՛ անասունների մթերատվության բարձրացման և թե՛ դրանց քանակի ավելացման գործում: 2022թ. հունվարի 1-ի դրությամբ, համայնքի խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը կազմել է 8858, այդ թվում կովեր՝ 4573, արտադրող ցուլեր՝ 312, բանող եզեր՝ 1, երինջներ 1-ից 2 տարեկան՝ 1376, երինջներ 2 տարեկանից բարձր, չսերմնավորված էգ մոզիներ 2 տարեկանից բարձր՝ 393 : Ոչխարների և այծերի գլխաքանակը կազմել է՝ 2292, ավանակների և ջորիների՝ 31, ձիերի՝ 626, հավերի և այլ թռչունների՝ 8778, նապաստակների և ճագարների՝ 536, մեղվաընտանիքների քանակը՝ 1627: Համայնքի տնային տնտեսությունների մի մասը հաջողությամբ զբաղվում է մեղվապահությամբ:

Համայնքում անասնապահությամբ, թռչնապահությամբ և մեղվապահությամբ զբաղվողներն արտադրում են կաթ, միս, բուրդ, ձու, մեղր: Համայնքի բնակիչներն իրենց տնամերձերում աճեցնում են կարտոֆիլ, բանջարաբուստանային կուլտուրաներ, զբաղվում են նաև պտղաբուծությամբ (տանձ, խնձոր, սալոր, խաղող, սերկեվիլ), մշակում են հացահատիկային, կերային մշակաբույսեր՝ հիմնականում սեփական կարիքների բավարարման համար:

Համայնքում խոշոր եղջերավոր անասնապահությամբ զբաղվող տնային տնտեսությունների մեծ մասը գարնանից մինչև գրեթե աշնան վերջը անասուններին արածեցնում են գյուղամերձ կամ հեռազնա արոտներում, չնայած արոտներ տանող ճանապարհները գտնվում են անմխիթար վիճակում:

Համայնքի բնակիչներն ունեն լուրջ խնդիրներ ու դժվարություններ արտադրված գյուղատնտեսական մթերքների իրացման հարցում, մանավանդ , որ ոչ բոլոր գյուղերն ունեն ավտոբուսային հաղորդակցություն մարզկենտրոն Վանաձորի կամ Ալավերդի քաղաքի հետ:

Հավելված 4-ում բերված է, 01.01.2022թ. դրությամբ, համայնքի բնակավայրերում առկա անասնազխաքանակի վերաբերյալ տվյալներն՝ ըստ առանձին բնակավայրերի:

1.10 ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Համայնքի անտառային ֆոնդի պահպանությունն իրականացվում է Դսեղի անտառտնտեսության կողմից: Ձմեռնամուտի նանտառտնտեսության կողմից անտառում կատարվում են սանիտարական հատումներ՝ համայնքի յուրաքանչյուր տնային տնտեսությանը տրամադրելով մինչև 8 խմ վառելափայտ:

Համայնքն իր ուժերով իվիճակի է լուծելու աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների կազմակերպումը, այդ ուղղությամբ անհրաժեշտ է պետական մարմինների աջակցությունը նոր աղբավայրի կառուցման հարցում: Ներկայումս աղբը տեղափոխվում է Ալավերդի համայնքի աղբավայր համաձայն Թումանյան համայնքի Կոմունալ տնտեսություն ՀՈԱԿի կողմից կնքված համապատասխան պայմանագրի: Վիճակն անմխիթար կարելի է համարել նաև հանդամասերից հոսող խմելու և տեխնիկական ջրերի ջրային ավազաններում, որոնց որոշ հատվածներում ջուրը՝ մինչև ջրամբար հասնելը, հոսում է բաց վիճակում, և այնտեղ անարգել մուտք են գործում անասունները: Դա հղի է սուր վարակիչ հիվանդությունների առաջացման վտանգով:

Բնության և շրջակա միջավայրի պահպանման ուղղությամբ անելիքներ ունեն նաև համայնքում գործող արտադրական կազմակերպությունները, քարի վերամշակման արտադրամասերը, քարհանք շահագործողները, որոնց գործունեության նկատմամբ անհրաժեշտ է ՏԻՄ-երի մշտական վերահսկողությունը:

Հարկ է նշել, որ այժմ բնապահպանությանն ուղված տարատեսակ ծրագրեր են իրականացնում տարբեր հիմնադրամներ և հասարակական կազմակերպություններ: Ծրագրերի ընթացքում հատկապես շեշտադրվում է մարդկանց կրթելը և համապատասխան գիտակցության բերելը:

1.11 ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքի բնակավայրերը կենտրոնին կապող միջբնակավայրային ճանապարհները խճապատ են, վատ սպասարկման պատճառով դարձել են դժվար անցանելի, ձմռանը՝ երբեմն նաև անանցանելի: Համայնքի բոլոր բնակավայրերը, բացառությամբ Թումանյանի և Դսեղի փակուղային են, ունեն միայն մեկ ելքի (մուտքի) ճանապարհ: Թումանյան քաղաքի ներբնակավայրային ճանապարհների մոտ 80%-ը բարեկարգ են: Դսեղի գլխավոր փողոցը ևս ամբողջությամբ ասֆալտապատ է: Համայնքի գյուղական բնակավայրերի ներբնակավայրային ճանապարհները գրունտային են, գտնվում են անբարեկարգ վիճակում: Համայնքի կենտրոնում տեղակայված են ճանապարհային երթևեկության նշաններ, գյուղերից դրանք կան միայն Դսեղում: Բնակավայրերի ներսում կան ավտոկանգառներ: Համայնքում գրեթե բացակայում է միջբնակավայրային հասարակական տրանսպորտը: Գործում են միայն հետևյալ երթուղիները՝ Դսեղ-Վանաձոր-Դսեղ, Դսեղ-Ալավերդի-Դսեղ (շաբաթական երկու անգամ) Վանաձոր-Աթան-Վանաձոր, Թումանյան-Ալավերդի, Թումանյան-Վանաձոր: Համայնքի կենտրոն չհանդիսացող բնակավայրերի բնակչությունը տեղաշարժվելու լուրջ

դժվարություններ ունի և սահմանափակ հնարավորություններ՝ օգտվելու այլ բնակավայրերում մատուցվող տրանսպորտային ծառայություններից:

ՔԱՂԱՔ ԹՈՒՄԱՆՅԱՆ, ՔՈՒԲԵՐ ԿԱՅԱՐԱՆԻ ԳՅՈՒՂ

Քաղաքի ներբնակավայրային փողոցների ընդհանուր երկարությունը կազմում է 27.5 կմ, որից 20.3 կմ-ը՝ բնահողային և 7.2 կմ-ը՝ ասֆալտապատ, 2,5 կմ տուֆով սալարկված: Փողոցները նախկինում մասնակի վերանորոգվել են համայնքի ուժերով, բայց կարիք ունեն լուրջ վերանորոգման ու բարեկարգման:

Համայնքի սեփականությունն են հանդիսանում 2 ծառայողական «ՆԻՎԱ» ավտոմեքենաները և 2 աղբատար մեքենան, 2 միկրոավտոբուս, 1 բազմաֆունկցիոնալ տրակտոր, 1 ինքնաթափ: Քաղաքում կան նաև մասնավոր մարդատար ավտոմեքենա՝ 289 հատ, բեռնատար ավտոմեքենա՝ 26 հատ և միկրոավտոբուս՝ 5 հատ:

Քաղաքի տարածքում կան 4 կամուրջ՝ Դեբեդ գետի վրա: Քաղաքի կապը մարզկենտրոնի հետ իրականացվում է միկրոավտոբուսներով ամեն օր, իսկ Ալավերդի քաղաքի հետ՝ շաբաթվա ամեն օր, բացի շաբաթ և կիրակի օրերից:

ԳՅՈՒՂ ԱԹԱՆ

Ներբնակավայրային փողոցների և ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 7 կմ: Համայնքի կենտրոնից մինչև գյուղ 28 կմ-ոց ճանապարհը վերանորոգվել է 2011 թվականին պետության կողմից՝ կատարելով իմնականում հողային և խճապատման աշխատանքներ, սակայն այդ ճանապարհը ասֆալտապատ չէ: Ներբնակավայրային փողոցները և ճանապարհները գրունտային են, կարիք ունեն լուրջ վերանորոգման ու բարեկարգման, չունեն ջրահեռացման հեղեղատներ: Անհրաժեշտ է վերանորոգել գյուղը արտավայրերին կապող 10 կմ-ոց ճանապարհը:

Ներկայումս գյուղի բնակչությունը հիմնականում օգտվում է Վանաձոր քաղաքի շուկայից՝ չնայած տրանսպորտային առկա դժվարություններին:

Գյուղում շահագործվում են 100 մարդատար և 25 բեռնատար, 1 հատ միկրոավտոբուս մասնավոր ավտոմեքենաներ: Գյուղում կան նաև մասնավոր 25 տրակտոր, որոնցից 2-ը թրթուրավոր են, իսկ 23-ը՝ անիվավոր:

Գյուղի տարածքում կան 2 փոքր կամրջակ, որոնք գտնվում են գյուղով անցնող գետակների վրա, ընդ որում դպրոց տանող ճանապարհի կամուրջը ծառայում է միայն հետիոտներին, տրանսպորտային միջոցների համար դպրոցն անհասանելի է:

Գործում է Վանաձոր-Աթան Վանաձոր տրանսպորտային երթուղին:

ԳՅՈՒՂ ԱՀՆԻՁՈՐ

Բնակավայրը համայնքի կենտրոնին միացված է 23 կմ խճապատ և գրունտային ճանապարհներով: Ներբնակավայրային փողոցների և ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 3.5 կմ, դրանք անմխիթար վիճակում են: Ներբնակավայրային փողոցները և ճանապարհները գրունտային են, կարիք ունեն լուրջ վերանորոգման ու բարեկարգման, չունեն ջրահեռացման հեղեղատներ:

Գյուղում կան մասնավոր 102 մարդատար ավտոմեքենա, 25 բեռնատար, 15 տրակտոր, որոնցից 2-ը թրթուրավոր են, իսկ 13-ը՝ անիվավոր: Համայնքի սեփականությունն է համարվում միայն 1 մարդատար «ՈՒԱԶ» ավտոմեքենան, այն ունի նորոգման կարիք:

Գյուղի տարածքում կան 2 փոքր կամրջակ՝ գյուղով անցնող գետակի վրա:

Գյուղը չունի ավտոբուսային հաղորդակցություն այլ բնակավայրերի հետ:

ԳՅՈՒՂ ԴՍԵՂ

Դսեղը՝ մարզկենտրոն Վանաձորին միացված 30 կմ ասֆալտապատ ճանապարհով, որը հիմնանորոգվել է 2003 թվականին: Ներբնակավայրային փողոցների և ճանապարհների երկարությունը կազմում է 28 կմ, որից ասֆալտապատ է 2 կմ-ն, 730 մետրը տուֆով սալարկված է: Մնացած հատվածները գտնվում են խճապատ վիճակում: Որոշ հատվածներ կարիք ունեն պարբերական վերանորոգումների:

Գյուղի բնակչությունը հիմնականում կապված է գյուղի՝ բավականին զարգացած խանութների հետ, իսկ մեծաձախ գնումների դեպքում Վանաձորի շուկայի հետ: Քաղաքի հետ կապը իրականացվում է հիմնականում սեփական տրանսպորտային միջոցներով, և ամենօրյա Դսեղ-Վանաձոր ավտոբուսով:

Գյուղում առկա է 2 կամրջակ:

Գյուղում շահագործվում են 575 մարդատար, 49 բեռնատար ավտոմեքենաներ, 1 միկրոավտոբուս, 42 տրակտոր, որոնցից 38-ը անվավոր, 4-ը՝ թրթուռավոր:

ԳՅՈՒՂ ԼՈՐՈՒՏ

Ներբնակավայրային փողոցների և ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 10կմ: Համայնքի կենտրոնից մինչև գյուղ 21 կմ-ոց ճանապարհը վերանորոգվել է 2011 թվականին պետության կողմից՝ կատարելով հիմնականում հողային և խճապատման աշխատանքներ: Ներբնակավայրային փողոցները և ճանապարհները կարիք ունեն վերանորոգման ու բարեկարգման, չունեն ջրահեռացման հեղեղատներ:

Գյուղի բնակչությունը հիմնականում օգտվում է Վանաձոր քաղաքի շուկայից՝ չնայած տրանսպորտային առկա դժվարություններին:

Գյուղում շահագործվում են 179 մարդատար և 84 բեռնատար մասնավոր ավտոմեքենա, մասնավոր 32 տրակտոր, որոնցից 1-ը թրթուրավոր է, իսկ 31-ը՝ անիվավոր:

Գյուղի տարածքում կան 2 փոքր կամրջակ՝ բնակավայրով անցնող գետակի վրա:

Ներբնակավայրային ճանապարհները և փողոցները վերանորոգման կարիք ունեն, հատկապես՝ 8 կմ երկարությամբ գյուղամիջյան փողոցները և գյուղը արոտավայրերին կապող 15 կմ-ոց ճանապարհները:

ԳՅՈՒՂ ՄԱՐԶ

Ներբնակավայրային փողոցների և ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 6 կմ: Համայնքի կենտրոնից մինչև գյուղ ճանապարհի երկարությունը 8կմ է, վերանորոգվել է 2011 թվականին պետության կողմից՝ կատարելով հիմնականում հողային և խճապատման աշխատանքներ: Ներբնակավայրային փողոցները և ճանապարհները կարիք ունեն վերանորոգման ու բարեկարգման, չունեն ջրահեռացման հեղեղատներ:

Գյուղում շահագործվում են 97 մարդատար և 45 բեռնատար մասնավոր ավտոմեքենա, մասնավոր 3 տրակտոր, որոնցից 2-ը թրթուրավոր են, իսկ 1-ը՝ անիվավոր /էքսկավատոր/:

Գյուղի տարածքում կան 3 կամուրջ՝ բնակավայրով անցնող Մարց գետի վրա:

ԳՅՈՒՂ ՇԱՄՈՒՏ

Ներբնակավայրային փողոցների և ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 3 կմ: Համայնքի կենտրոնով անցնող մայրուղուց մինչև գյուղ 21 կմ ճանապարհը խճապատ

է: Ներբնակավայրային փողոցները կարիք ունեն վերանորոգման ու բարեկարգման, չունեն ջրահեռացման հեղեղատներ:

Բնակավայրի բնակչությունը հիմնականում օգտվում է Վանաձոր քաղաքի շուկայից՝ չնայած տրանսպորտային առկա դժվարություններին:

Բնակավայրում շահագործվում են 88 մարդատար և 14 բեռնատար մասնավոր ավտոմեքենա, մասնավոր 15 տրակտոր, որոնցից 2-ը թրթուրավոր են, իսկ 13-ը՝ անիվավոր: Համայնքի սեփականությունն է համարվում «Բելառուս T 82-10» տրակտորը, որը սարքին վիճակում է:

Բնակավայրի տարածքում կան 2 փոքր կամրջակ՝ գյուղով անցնող գետակի վրա:

Գյուղը չունի ավտոբուսային հաղորդակցություն այլ բնակավայրերի հետ:

ԳՅՈՒՂ ՉԿԱԼՈՎ

Ներբնակավայրային փողոցների և ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 5,7 կմ: Ճանապարհները հիմնականում խճապատ են, կան որոշ հատվածներ, որոնք գրունտային են և վերանորոգման կարիք ունեն: Գյուղի սկզբնամասում՝ մի հատվածում կարիք կա ճանապարհի հենապատի կառուցման: Գլխավոր ճանապարհից Չկալով բարձրացող ճանապարհի երկարությունը՝ 2,4 կմ է, որը վերջին անգամ խճային տարբերակով վերանորոգվել է 2008 թ.-ին: Այս ճանապարհը նույնպես կարիք ունի վերանորոգման: Գյուղի բնակիչներն օգտվում են Վանաձորի շուկայից, սեփական տրանսպորտային միջոցներով, քանի որ գյուղից մարզկենտրոն կանոնավոր տրանսպորտ չկա:

Բնակավայրում շահագործվում են 11 մարդատար, 6 բեռնատար, 7 տրակտոր, 2 միկրոավտոբուս:

ԳՅՈՒՂ ՔԱՐԻՆՋ

Ներբնակավայրային փողոցների և ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 9 կմ: Մայրուղուց մինչև գյուղ՝ 3 կմ-ոց ճանապարհը վերանորոգվել է 2011 թվականին պետության կողմից՝ կատարելով հիմնականում հողային և խճապատման աշխատանքներ: Մնացած 6 կմ-ոց մասը կազմում են ներբնակավայրային այլ փողոցները, որոնք կարիք ունեն վերանորոգման ու բարեկարգման: Ներբնակավայրային ճանապարհները և փողոցները չունեն ջրահեռացման հեղեղատներ:

Գյուղի բնակչությունը հիմնականում օգտվում է Վանաձոր քաղաքի շուկայից:

Գյուղում շահագործվում են 96 մարդատար և 30 բեռնատար մասնավոր ավտոմեքենա, մասնավոր 7 տրակտոր, որոնցից 5-ը թրթուրավոր են, իսկ 2-ը՝ անիվավոր: Գյուղում կան համայնքի սեփականություն համարվող 2 մարդատար ավտոմեքենաներ՝ «ՈւԱ2-469», որը ներկայումս անսարք վիճակում է և ոչ պիտանի հետագա շահագործման համար, և «ՎԱ2-2110»՝ սարքին վիճակում:

Բնակավայրի տարածքում կան 2 փոքր կամրջակներ՝ գյուղով անցնող գետակի վրա:

Գյուղը չունի ավտոբուսային հաղորդակցություն այլ բնակավայրերի հետ:

1.12 ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքի տարածքում գործում են համապատասխանաբար Թումանյան քաղաքում՝ 4, Աթանում և Ահնիձորում՝ 1-ական, Դսեղում 13, Լորուտում՝ 2, Մարցում՝ 3, Չկալովում՝ 1,

Քարինջում՝ 4 առևտրի կետ, որոնք հիմնականում զբաղվում են սննդի որոշ տեսակների, ծխախոտի, ակոհոլային խմիչքների և այլ ապրանքների վաճառքով: Դսեղում կան երկու շինանյութ վաճառող խանութներ, մեկ հագուստի, մեկ բանջարեղենի խանութներ: Նրանք բոլորն էլ հաշվառված են պետական հարկային մարմնում, ինչպես նաև եռամսյա կտրվածքով վճարում են համապատասխան տեղական տուրք համայնքի բյուջե՝ գործունեության թույլտվության համար: Շամուտում գործող առևտրի կետ չկա:

Թումանյան քաղաքում գործում է նաև ավտոմեքենաների գազալիցքվորման 1 կետ:

1.13 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Այս ոլորտում առկա իրավիճակը ներկայացվում է ստորև՝ ըստ համայնքի առանձին բնակավայրերի:

ՔԱՂԱՔ ԹՈՒՄԱՆՅԱՆ, ՔՈՒԲԵՐ ԿԱՅԱՐԱՆԻ ԳՅՈՒՂ

Քաղաքում գործում է միջնակարգ հանրակրթական դպրոց, որտեղ սովորում են 162 աշակերտ: Արտագաղթն իր բացասական ազդեցությունն է թողել նաև համայնքի դպրոցի աշակերտների թվի վրա, որը վերջին տարիներին անընդհատ նվազել է: Դպրոցում կան 30 աշխատող, որոնցից 23 -ը մանկավարժ են: Դպրոցի շենքը կարիք ունի հիմնանորոգման: Ձմռանը դպրոցի շենքը ջեռուցվում է գազով աշխատող վառարաններով: 2015թ. «Վիվասել» ընկերության և «Մանուկների հիմնադրամի» ֆինանսական միջոցներով դպրոցում կառուցվել է «Սմարթ» դասասենյակ, իսկ բարերարների ֆինանսավորմամբ վերանորոգվել է 1-ին և 2-րդ հարկերի սանհանգույցների մի մասը:

Համայնքում գործում է նախադպրոցական ուսումնական 1 հաստատություն՝ մանկապարտեզ, ուր հաճախում են 45 երեխա և աշխատում են 10 աշխատող: Համայնքի մանկապարտեզի շենքը հիմնականում վերանորոգված է, այն ներկայում բավարար վիճակում է, ապահովված է ջրամատակարարմամբ, գույքով, երեխաներին անհրաժեշտ պարագաներով, խաղալիքներով: Մանկապարտեզը գործում է 8-ժամյա աշխատակարգով, երեխաներին տրվում է տաք սնունդ: Համայնքի ավագանու որոշմամբ, մանկապարտեզ հաճախող երեխաների ծնողական ամսական վճարը սահմանվել է 2500 դրամ:

ԳՅՈՒՂ ԱԹԱՆ

Գյուղում գործում է հիմնական հանրակրթական դպրոց, որտեղ սովորում են 29 աշակերտ: Գյուղից աստիճանական արտագաղթն իր բացասական ազդեցությունն է թողել նաև դպրոցի աշակերտների թվի վրա, որը վերջին տարիներին անընդհատ նվազել է: Դպրոցում կան 19 աշխատող, որոնցից 13-ը մանկավարժ են: Դպրոցի շենքը հիմնականում վերանորոգված է և ներկայումս գտնվում է բարվոք վիճակում: Ձմռանը դպրոցի շենքը ջեռուցվում է վառելիքայտով, կարիք ունի տանիքի վերանորոգման:

Գյուղում գործում է նախակրթարան, որտեղ աշխատում են 2 դաստիարակ, և հաճախում են 5 երեխա հաստատություններ չկան:

ԳՅՈՒՂ ԱՇՆԻՁՈՐ

Գյուղն ունի հիմնական դպրոց՝ 1 մասնաշենքով, որտեղ սովորում են 21 աշակերտ: Ներկայումս դպրոցի շենքը գտնվում է բարվոք վիճակում: Դպրոցում աշխատում են 18 աշխատող, որոնցից 9-ը մանկավարժ են: Ձմռանը դպրոցի շենքը ջեռուցվում է

վառելափայտով: Դպրոցն ունի սանհանգույցների փոխարինման և ջրամատակարարման, ջրահեռացման խնդիրներ:

Գյուղում կա նախակրթարան, որտեղ սովորում են 6 երեխա, աշխատում են 2 դաստիարակ:

ԳՅՈՒՂ ԴՍԵՂ

Գյուղում գործում է միջնակարգ 12-ամյա դպրոց, որը կրում է Մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի անունը: Դպրոցը ժամանակին ունեցել է մոտ 500 աշակերտ, սակայն արտագաղթի և որոշ դեպքերում կրթական որակի անկումը հանգեցրել է աշակերտների նվազեցման: Դպրոցում սովորում է 220 աշակերտ, 36 աշխատող, որոնցից 29 մանկավարժ: Գյուղի դպրոցը հիմնականում վերանորոգված է, սակայն կան որոշակի կոսմետիկ վերանորոգումների կարիք: Դպրոցը ջեռուցվում է բնական գազով և ամբողջությամբ: Դպրոցի տնօրինությունն ակտիվ աշխատանքների արդյունքում կարողացել է տարբեր ծրագրերի միջոցով իրականացնել էներգախնայող և գյուղատնտեսական ծրագրեր: Տեղադրվել է արևային ֆոտովոլտային կայան և ինտենսիվ այգի, որը ապահովված է նաև հակակարկտային ցանցով և ոռոգման կաթիլային համակարգով: Դպրոցում կա Սմարթ սենյակ, որտեղ գործում է նաև Արմաթ ինժեներական լաբորատորիա:

Գյուղում գործում է նաև մանկապարտեզ 1 խմբով, որտեղ այցելում են 18 երեխաներ, 5 աշխատողներ:

Գյուղում գործում են նաև ըմբշամարտի և ֆուտբոլի խմբակներ, որի ֆինանսավորումը իրականացվում է համայնքի բյուջեից:

ԳՅՈՒՂ ԼՈՐՈՒՏ

Գյուղում գործում է միջնակարգ հանրակրթական դպրոց, որտեղ սովորում են 87 աշակերտ: Համայնքից աստիճանական արտագաղթն իր բացասական ազդեցությունն է թողել նաև գյուղի դպրոցի աշակերտների թվի վրա, որը վերջին տարիներին անընդհատ նվազել է: Դպրոցում աշխատում են 26 աշխատող, որոնցից 18-ը մանկավարժ են: Դպրոցի շենքը հիմնականում վերանորոգված է և ներկայումս գտնվում է բարվոք վիճակում: Ձմռանը դպրոցի շենքը ջեռուցվում է բնական գազով:

Գյուղում գործում է նախադպրոցական ուսումնական 1 հաստատություն՝ մանկապարտեզը, ուր հաճախում են 20 երեխա և աշխատում են 5 աշխատող: Գյուղի մանկապարտեզի շենքը հիմնականում վերանորոգված է, սակայն պատերից մեկը ենթակա է կապիտալ նորոգման, կարիք ունի սենյակներից մեկի և տանիքի վերանորոգման, կա պատուհանների փոխարինման անհրաժեշտություն: Մանկապարտեզի շենքը ապահովված է ջրամատակարարմամբ, գույքով, երեխաներին անհրաժեշտ պարագաներով, խաղալիքներով: Մանկապարտեզը գործում է 7-ժամյա աշխատակարգով, երեխաներին տրվում է տաք սնունդ: Ձմռանը շենքը ջեռուցվում է վառելափայտով:

Համայնքի ավագանու որոշմամբ, մանկապարտեզ հաճախող երեխաների ծնողական ամսական վճարը սահմանվել է 2500 դրամ:

ԳՅՈՒՂ ՄԱՐՑ

Գյուղում գործում է միջնակարգ հանրակրթական դպրոց, որտեղ սովորում են 50 աշակերտ: Դպրոցում աշխատում են 21 աշխատող, որոնցից 14-ը՝ մանկավարժ: Դպրոցի շենքը տիպային է, կառուցվել է 2014 թվականին: Ձմռանը դպրոցի շենքը ջեռուցվում է բնական գազով:

Դպրոցի շենքը նախատեսված է նաև նախակրթարանի համար, որտեղ այժմ գործում է նախակրթարան, 11 երեխայով, 2 աշխատողով: Գյուղում այլ կրթական հաստատություններ չկան:

ԳՅՈՒՂ ՇԱՄՈՒՏ

Բնակավայրում գործում է հիմնական հանրակրթական դպրոց, որտեղ սովորում են 31 աշակերտ: Դպրոցում կան 18 աշխատող, որոնցից 10-ը մանկավարժ են: Դպրոցի շենքը հիմնականում վերանորոգված է և ներկայում գտնվում է բարվոք վիճակում: Ձմռանը դպրոցի շենքը ջեռուցվում է վառելափայտով: Նախակրթարան չկա: Դպրոցում կա ջրամատակարարում, սանհանգույցը գործում է: Դպրոցում գործում են մարզադահլիճը և խաղահրապարակը, սակայն մարզադահլիճը վերանորոգման կարիք ունի:

Գյուղում մանկապարտեզ և կրթական այլ հաստատություններ չկան:

ԳՅՈՒՂ ՔԱՐԻՆՋ

Բնակավայրում գործում է միջնակարգ հանրակրթական դպրոց, որտեղ սովորում են 66 աշակերտ: Դպրոցում աշխատում են 24 աշխատող, որոնցից 16-ը մանկավարժ են: Դպրոցի շենքը հիմնականում վերանորոգված է, գտնվում է բարվոք վիճակում: Ձմռանը շենքը ջեռուցվում է վառելափայտով, սակայն ցանկալի է մոտ ապագայում այդ նպատակով օգտագործել գազ, առավել ևս, որ բնակավայրում անցկացված գազատարի և դպրոցի միջև հեռավորությունը կազմում է ընդամենը 50 մ: Շենքը ներկայումս կարիք ունի միայն ընթացիկ նորոգման, ներքին հարդարման, դռների ու պատուհանների, սանհանգույցների փոխարինման և ջրահեռացման համակարգի (կոյուղու) կապիտալ նորոգման:

Բնակավայրում գործում է նախադպրոցական ուսումնական հաստատությունը՝ մանկապարտեզը, որտեղ հաճախում են 21 երեխա և աշխատում են 6 աշխատող: Բնակավայրի մանկապարտեզի շենքը հիմնականում վերանորոգված է, միայն կարիք է զգացվում պատուհանների փոխարինման, այն ներկայումս բավարար վիճակում է, ապահովված է ջրամատակարարմամբ, գույքով, երեխաներին անհրաժեշտ պարագաներով, խաղալիքներով: Այդ գործում մանկապարտեզին օգնում են նաև «Վորլդ Վիժն - Հայաստան» կազմակերպության Ալավերդու տարածքային զարգացման ծրագիրը (ՏԶԾ) և Ալավերդու «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ն:

Մանկապարտեզը գործում է 8-ժամյա աշխատակարգով, բայց քանի որ տարածքը ընդլայնելու հնարավորություն չկա, ավելի նպատակային կլինի, եթե վերանորոգվի համայնքի հաշվեկշռում գտնվող անավարտ մանկապարտեզի տիպային շենքը:

Համայնքի ավագանու որոշմամբ, մանկապարտեզ հաճախող երեխաների ծնողական ամսական վճարը սահմանվել է 2500 դրամ:

1.14 ՄՇԱԿՈՒՅԹ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Համայնքը հարուստ է մշակութային օջախներով: Դսեղում է գտնվում Հովհաննես Թումանյանի անվան տուն-թանգարանը, որը հանրապետության ամենաշատ այցելվող տուն-թանգարանն է: Կախված թումանյանական գործոնից համայնքում տարեկան մի քանի անգամ տեղի է ունենում միջոցառումներ, մեծ շուքով նշվում է Բանաստեղծի ծնունդը: Բացի նշվածից համայնքի տարածքում կան բազմաթիվ և հազվագյուտ պատմամշակութային նշանակություն ունեցող եկեղեցիներ, մատուռներ, հին գյուղատեղիներ և խաչքարեր: Բացի համայնքի կենտրոնից, և Դսեղ համայնքից, մնացած բնակավայրերում առկա և համայնքային

սեփականության մշակութային կառույցները, ֆինանսական միջոցների սղության պատճառով, գրեթե չեն գործել, անտեսվել են բնակչության և, հատկապես, երիտասարդության հետ տարվող աշխատանքները: Այսպես, Լորուտ գյուղում մշակույթի տունը ամբողջովին քանդված է, Շամուտ գյուղում չի եղել մշակութային որևէ կառույց, Քարինջի մշակույթի տունն ավերվել է 1988 թվականին տեղի ունեցած Սպիտակի երկրաշարժի ժամանակ, Մարցում մշակույթի տունը օգտագործվում է որպես հանդիսությունների և արարողությունների սրահ, իսկ Աթան, Ահնիձոր գյուղերի ակումբները գտնվում են կիսավեր վիճակում և ունեն վերանորոգման խիստ կարիք:

Գյուղական բոլոր բնակավայրերի դպրոցներում կան գրադարաններ: Աթանի գրադարանը տեղակայված է ակումբի մի սենյակում, որը գտնվում է անմխիթար վիճակում, ունի մոտ 3280 կտոր գրքային ֆոնդ: Ահնիձորում ևս գրադարանը տեղակայված է ակումբի մի սենյակում, որը ևս գտնվում է անմխիթար վիճակում, ունի 2224 կտոր գրքային ֆոնդ:

Դսեղի մշակույթի տունը գտնվում է բավականին լավ վիճակում և տարեկան մի քանի անգամ տեղի են ունենում մշակութային ակտիվ միջոցառումներ: Դսեղի գրադարանը գտնվում է մշակույթի տան երկրորդ հարկում և ունի 9708 կտոր գիրք, բազմաթիվ հազվագյուտ նմուշներով: Դսեղը նաև հարուստ է իր պատմամշակութային վայրերով: Այստեղ է գտնվում Մամիկոնյան արքայատոհմի կողմից կառուցված Բարձրաքաշ, Սուրբ Գրիգորի վանք-վանական համալիրը, որը դարձել է զբոսաշրջային հայտնի կենտրոն: Այս վանք տանող ճանապարհին է գտնվում նաև հայտնի Գիքորի աղբյուրը: Հայտնի է նաև 13-րդ դարում կառուցված քառասնից մանկանց վանքը, որը ևս հայտնի զբոսաշրջային ուղղություն է: Բացի այս ամենից գյուղի կենտրոնում են գտնվում Մամիկոնյան իշխանական տոհմի գերեզմանատունը, իր ամենափրկիչ խաչքարով և քառակող կոթողով: Դսեղում է գտնվում նաև Սիրուն Խաչ խաչքարը, որը 1969 թ. Ֆրանսիայում տեղի ունեցած ցուցահանդեսում զբաղեցրել է 2-րդ հորիզոնականը:

Լորուտի գրադարանի շենքի անմխիթար վիճակի պայմաններից ելնելով՝ գրքային ֆոնդը տեղափոխվել է համայնքի միջնակարգ դպրոց: Մարցի գրադարանը տեղակայված է բնակավայրի վարչական ներկայացուցչի նստավայրի մի սենյակում, ունի մոտ 5000 կտոր գրքային ֆոնդ: Շամուտի գրադարանը ևս տեղակայված է վարչական ներկայացուցչի նստավայրի մի սենյակում, որը գտնվում է անմխիթար վիճակում, ունի մոտ 2400 կտոր գրքային ֆոնդ: Քարինջի գրադարանը տեղակայված է մանկապարտեզի շենքում, ունի մոտ 5000 կտոր գրքային ֆոնդ: Գյուղական բոլոր բնակավայրերի գրքերը նպատակահարմար է հանձնել բնակավայրերի դպրոցներին: Չկալով գյուղի գրադարանը գտնվում է վարչական ղեկավարի հարակից սենյակում և գտնվում է բարվոք վիճակում, ունի 3810 կտոր գիրք:

Թումանյան քաղաքի գրադարանը տեղակայված է համայնքապետարանի շենքի առաջին հարկում, ունի 18279 կտոր գրքային ֆոնդ:

Թումանյան քաղաքի մշակույթի տունը վերանորոգվել է 2008թ.-ին՝ ՀՄԼՀ-ի աջակցությամբ: Մշակույթի տանը հաճախակի կազմակերպվում են համերգներ, մշակութային այլ միջոցառումներ: Մշակույթի տանը գործում է նաև մանկական արվեստի դպրոցը: Դպրոցում գործում են դաշնամուրի և նկարչության խմբակներ, ուր հաճախում են 18 երեխա: Դպրոցը կահավորված է գույքով: Ձմռանը դպրոցի շենքը ջեռուցվում է էլեկտրական տաքացուցիչներով:

Քոբեր կայարանի գյուղի տարածքում է գտնվում նշանավոր Քոբայրի վանական համալիրը, որը ներկայումս գտնվում կիսատ վերականգնման փուլում: Հարկ է նշել, որ այստեղ ևս բավականանին ակտիվացել է զբոսաշրջային հոսքը, հատկապես Քոբայր-Հոռոմայր քայլարշավային երթուղում բարեկարգումից և տեղեկատվական նշանների տեղադրումից հետո: Լորուտի եկեղեցին վերանորոգնվել է 2018 թվականին: Մարցի նոր եկեղեցին կառուցվել է 2014թ.-ին, իսկ հին կիսավեր եկեղեցին (13-րդ դար) վերակառուցման և

վերանորոգման կարիք ունի: Շամուտում առկա մատուռը կառուցվել է 2005 թվականին, այնտեղ կան նաև 3 խաչքար, որոնցից 2-ն ունեն վաղեմի պատմություն (մոտ 17-րդ դար): Քարինջի եկեղեցին վերանորոգվել է 2016թ.-ին գյուղի նախկին բնակիչ բարերարի միջոցներով, մատուռը վերանորոգման կարիք ունի:

1.15 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՐՈՒՐԱ, ՍՊՈՐՏ

Համայնքի տարածքում գործող «Թումանյանի առողջության կենտրոն» ՊՓԲԸ-ում, աշխատում է 1 բժիշկ, 5 բուժքույր: Կենտրոնն ապահովված է խմելու ջրով, առաջին բուժօգնության պարագաներով և դեղորայքով: Շենքը կարիք ունի մասնակի վերանորոգման: ՊՓԲԸ-ն սպասարկում է նաև Քարինջի բուժակմանկաբարձական կետը՝ որտեղ աշխատում է 1 բուժքույր: Բուժկետը տեղակայված է բնակավայրի մանկապարտեզի շենքում, բարվոք վիճակում է, ապահովված է խմելու ջրի ջրամատակարարմամբ: 2012 թվականին Քարինջ համայնքի բյուջեի և «Վորլդ Վիժն - Հայաստան» կազմակերպության Ալավերդու ՏԶԾ-ի համաֆինանսավորմամբ, բուժկետի մուտքի մոտ կառուցվել է սպասասրահ, որը 2014 թվականի սկզբին կահավորվել է անհրաժեշտ գույքով:

«Դսեղ առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ը գտնվում է Դսեղ գյուղում, աշխատում է 3 բժիշկ և 4 բուժքույր: Լորուտի, Մարցի, Աթանի, Ահնիձորի, Չկալովի և Շամուտի բուժակմանկաբարձական կետերում ևս աշխատում են 1-ական բուժքույրեր: Աթանի բուժկետը տեղակայված է մանկապարտեզի շենքում, ունի վերանորոգման կարիք, ապահովված է խմելու ջրի ջրամատակարարմամբ, առաջին բուժօգնության պարագաներով և դեղորայքով: Ահնիձորի բուժկետի շենքը վերանորոգման և հատկապես տանիքի փոխման կարիք ունի: Լորուտի բուժկետը ապահովված չէ խմելու ջրի ջրամատակարարմամբ: Չկալովի բուժկետը գտնվում է վարչական ղեկավարի նստավայրին կից: Մարցի բուժկետը գործում է տնակային պայմաններում, ապահովված է խմելու ջրի ջրամատակարարմամբ, կարիք կա փոխարինելու քարե շինությունով: Շամուտի բուժկետը տեղակայված է բնակավայրի վարչական ներկայացուցչի նստավայրում, բարվոք վիճակում է:

Բոլոր բուժկետերը ապահովված են առաջին բուժօգնության պարագաներով և դեղորայքով:

Թումանյանում գործում է մարզադաշտը և խաղահրապարակը, որտեղ գործում է ֆուտբոլային թիմ և կազմակերպվում են ֆուտբոլի մրցումներ տարբեր համայնքների թիմերի միջև: Ներկայումս «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի միջոցներով քաղաքի 3-րդ թաղամասում կառուցվում է Ծերերի կենտրոն, ամռան ամիսներին այն որպես ճամբար գործելու է երեխաների համար: Մշակույթի կենտրոնում գործում են հարակից խմբակներ: Կարատեի խմբակը, պարի խմբակ և մակրամեի խմբակ:

Դսեղում ևս գործում է ֆուտբոլային խումբ, տեղի են ունենում պարբերական պարապմունքներ: Այստեղ գործում է նաև ըմբշամարտի խմբակ, որին երեխաները մեծ սիրով հաճախում են:

Աթանի հիմնական դպրոցի մարզադահլիճը գտնվում է անմխիթար վիճակում, գյուղում այլ խաղահրապարակ չկա:

Ահնիձոր գյուղի դպրոցը ևս չունի խաղահրապարակ:

Լորուտի միջնակարգ դպրոցում գործում են մարզադահլիճը և խաղահրապարակը՝ ֆուտբոլի դաշտով, որոնցից, բացի դպրոցի աշակերտներից, օգտվում են նաև երիտասարդները::

Մարցի միջնակարգ դպրոցում գործում են մարզադահլիճը և խաղահրապարակը՝ ֆուտբոլի դաշտով, որոնցից, բացի դպրոցի աշակերտներից, օգտվում են նաև

երիտասարդները: Բնակավայրում կա նաև առանձին ֆուտբոլի դաշտ, որտեղ կազմակերպվում են միջբնակավայրային խաղեր:

Շամուտի հիմնական դպրոցում գործում են մարզադահլիճը և խաղահրապարակը:

Քարինջի միջնակարգ դպրոցում գործում են մարզադահլիճը և խաղահրապարակը՝ ֆուտբոլի դաշտով, որոնցից, բացի դպրոցի աշակերտներից, օգտվում են նաև երիտասարդները: Բնակավայրում գործում է ֆուտբոլի խմբակ, որը հասարակական հիմունքներով ղեկավարում է բնակավայրի սոցիալական աշխատողը, իսկ խմբակին մարզագույքով և խաղակոշիկներով ապահովում է «Վորլդ Վիժն - Հայաստան» կազմակերպության Ալավերդու ՏՁԾ-ն:

1.16 ՀԱՆԳՍԻ ԳՈՏԻՆԵՐ, ԶԲՈՍԱՅԳԻՆԵՐ, ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿՆԵՐ, ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ

Համայնքի բոլոր բնակավայրերին հարակից տարածքներում կան հանգստի գոտիներ և գեղեցիկ հուշադրյուրներ, որտեղ համայնքի բնակիչները և շատ զբոսաշրջիկներ անց են կացնում իրենց հանգիստը: Հանգստի նմանատիպ վայրերից հատկապես հայտնի է Դսեղ գյուղի մոտակայքում գտնվող լճակը՝ Ծովեր անվանումով:

Թումանյան քաղաքի միայն 1-ին թաղամասում է գործում մանկական խաղահրապարակը և հանգստի գոտին, այն հիմնականում ծառայում է մանկապարտեզ հաճախող, ինչպես նաև այդ թաղամասում բնակվող երեխաներին: Կարիք կա նման խաղահրապարակներ կառուցել նաև մյուս 2 թաղամասերում:

Աթան գյուղում չկան խաղահրապարակներ և զբոսայգիներ:

Ահնիձորի դպրոցն ունի վոլեյբոլի բացօթյա խաղահրապարակ:

Դսեղ գյուղի կենտրոնում կա խաղահրապարակ և բացօթյա մարզման կենտրոն:

Լորուտում և Մարցում, բացի դպրոցների ֆուտբոլի դաշտերի խաղահրապարակներից, կան նաև առանձին ֆուտբոլի դաշտեր:

Չկալովի կենտրոնում առկա է բավականին բարեկարգ խաղահրապարակ:

Շամուտի դպրոցում կա խաղահրապարակ:

Քարինջի մանկապարտեզի բակային տարածքում գործում է խաղահրապարակը, այն հիմնականում ծառայում է մանկապարտեզ հաճախող, ինչպես նաև այդ թաղամասում բնակվող երեխաներին: Այդ խաղահրապարակը մասնակիորեն վերանորոգվել և ցանկապատվել է համայնքի և «Վորլդ Վիժն - Հայաստան» կազմակերպության Ալավերդու ՏՁԾ-ի համատեղ ուժերով, սակայն ներկայումս այնտեղ կարիք կա ավազային խաղահրապարակի կառուցման և համապատասխան խաղամիջոցների տեղադրման:

1.17 ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Համայնքում կան 4530 աշխատունակ մարդիկ, որոնցից մշտական աշխատանքով (այդ թվում՝ գյուղատնտեսական) զբաղված են միայն 3062-ը, աշխատանք չունեն 1468-ը, սակայն վերջիններից միայն 149-ն են գրանցված Ալավերդու զբաղվածության տարածքային կենտրոնում որպես գործազուրկներ, քանի որ համայնքի բնակիչները հիմնականում հողերի սեփականատերեր են և, համաձայն ՀՀ օրենսդրության, չեն համարվում գործազուրկ:

Համայնքի մոտ 1167 ընտանիքներից 202-ը հաշվառված են ընտանեկան նպաստի պետական համակարգում, որոնցից ցուցիալապես անապահովության նպաստառուներ են գնահատվել 149 ընտանիքները (ընդհանուրի մոտ 12 %-ը): Համայնքում բնակվում են նաև 149 հաշմանդամ և միակողմանի ծնողազուրկ 34 երեխա, բնակարանի կարիքավոր են 70 ընտանիքներ, բնակարանի բարելավման կարիք ունեն 184 ընտանիքներ:

Համայնքի ընտանիքների մեծ մասը սոցիալապես խոցելի են՝ բազմաբնույթ սոցիալառոջապահական խնդիրներով: Համայնքի բնակիչներին շոշափելի սոցիալական ծառայություններ մատուցվում են հիմնականում Ալավերդու ՄՕՏԳ-ի (պետական պատվերի շրջանակներում) և համայնքապետարանի կողմից, ինչպես նաև մի շարք դոնոր կազմակերպությունների («Հայաստանի մանուկների հիմնադրամ» բարեգործական կազմակերպության, «ՎորլդՎիժն - Հայաստան» կազմակերպության Ալավերդու ՏՀԾ-ի, Ալավերդու «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ի, «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի) կողմից՝ դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում:

1.18 ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ

Համայնքի կազմի մեջ մտնող բնակավայրերում վերջին տարիների ընթացքում նկատելի էր որոշակի դրական տեղաշարժ նախկին համայնքների ՏԻՄ-երի և բնակչության փոխհարաբերություններում: Ներկայումս նոր ձևավորված ՏԻՄ-երի գործունեությունը դարձել է համեմատաբար ավելի թափանցիկ և հրապարակային, որը զգալիորեն նպաստում է համայնքի բնակչության իրազեկվածությանը ՏԻՄ-երի ընդունած որոշումներին և կատարած աշխատանքներին: Համայնքի բնակիչները սկսել են բավականին ակտիվորեն մասնակցել ՏԻՄ-երի կողմից կազմակերպված հանրային հանդիպումներին ու միջոցառումներին: 2015թ.-ին «Հայաստանի մանուկների հիմնադրամ» բարեգործական կազմակերպության կողմից կառուցված՝ համայնքի Սմարթ սենյակում, բնակավայրերի վարչական ներկայացուցիչների նստավայրերում կազմակերպվում են հանրային լսումներ և քննարկումներ (մասնավորապես, համայնքի բյուջեի նախագծի, համայնքային ծրագրերի և այլնի շուրջ), տեղական և միջազգային տարբեր կազմակերպությունների կողմից անցկացվում են ուսուցման և վերապատրաստման դասընթացներ, սեմինարներ, որոնց հաճույքով մասնակցում են ինչպես համայնքի ՏԻՄ-երը և աշխատակազմի մասնագետները, այնպես էլ համայնքի որոշ ակտիվ բնակիչներ: Հիմնականում բոլոր միջոցառումները, այդ թվում նաև ավագանու նիստերը, հեռարձակվում են առցանց տարբերակով՝ համայնքի <http://www.tumanyancity.am/> ինտերնետային կայքի և Թումանյանի համայնքապետարան անվամբ ֆեյսբուքյան էջի միջոցով միջոցով, որը նպաստում է ՏԻՄ-երի գործունեության նկատմամբ բնակչության վստահության ամրապնդմանը:

Նախկին Թումանյան համայնքը դեռևս 2013 թվականին ընդգրկվել է «Բաց կառավարման գործընկերություն/Հայաստան» գործողությունների ծրագրում և այդ շրջանակներում 2 անգամ համայնքում SMS-ների միջոցով անցկացվել են համայնքային միկրոհարցումներ՝ համայնքի համար կարևոր նշանակություն ունեցող հարցերի վերաբերյալ

բնակչության կարծիքը հաշվի առնելու համար: Այս առումով, նախկինում ձեռք բերված դրական փորձը պետք է կիրառեն նաև նորընտիր ՏԻՄ-երը:

Համայնքի ավագանու կողմից ընդունվել են տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության, համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության, համայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգերը, որոնք մեծապես կնպաստեն բնակիչների ավելի ակտիվ մասնակցությանը տեղական ինքնակառավարմանը:

1.19 ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Համայնքում աղետների (բնածին և տեխնածին) ռիսկի կառավարման ոլորտում պարբերաբար աշխատանքներ են տարվում: Համայնքապետարանի աշխատակազմի, ԱԻՆ-ի և ՄԱԿ-ի աջակցությամբ ստեղծվել է աղետների դեպքում համայնքի բնակչության տարահանման գործողությունների և աղետների ռիսկի պլանը, որը դեռևս չի հաստատվել ավագանու կողմից :

Համայնքում իրականացվել են տեղական մակարդակում խոցելիության և կարողությունների գնահատման գործողություններ, որի հիման վրա կազմվել է աղետների ռիսկի նվազեցման պլանը, որի շնորհիվ էլ հնարավոր կլինի իրականացնել համայնքին սպառնացող աղետների ռիսկի նվազեցման նպատակամետ գործողություններ ու միջոցառումներ: Այս խնդիրը կարևոր է, քանի որ համայնքի բնակավայրերում և հատկապես՝ միջբնակավայրային և ներբնակավայրային ճանապարհներին մեծ է քարաթափումների, սողանքների վտանգը:

1.20 ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Համայնքի գործարար միջավայրը սահմանափակվում է համայնքում գործող 12 արտադրական ՍՊԸ-ների և ԱԶ-ների, առևտրի 32 մանր կետերի, 7 գյուղերի «Արոտ օգտագործողների սպառողական կոոպերատիվ»-ների գործունեությամբ, որոնց հետ ՏԻՄ-երը պաշտպանում են լավ ու բարյացկամ հարաբերություններ: Վերջին տարիներին նկատելիորեն ակտիվացել է ներդրումային միջավայրը: Հատկապես տուրիզմի ոլորտում կատարվում են բավականին ակտիվ ներդրումներ: Դսեղում արդեն իսկ կա 2 մեծ հյուրանոցային համակարգ, ինչպես նաև կառուցվող մի քանի հյուրանոցներ կառուցման սկզբում են գտնվում: Մնացած համայնքներում և Թումանյան-Աթան ճանապարհահատվածի երկայնքով նկատվում է գործարար միջավայրի ակտիվացում:

Եվ այպես, համայնքի և նրա կազմի մեջ մտնող բնակավայրերի իրավիճակի բնութագրման և գնահատման ընդհանուր և ոլորտային հիմնական ցուցանիշները բերված են **հավելված 5-ում**: Այդ ցուցանիշները երկու տեսակի են՝ համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը (միջավայրը) բնութագրող (ոչ ֆինանսական) և ֆինանսական ցուցանիշներ:

Հիմնվելով համայնքում և նրա կազմի մեջ մտնող բնակավայրերում տիրող փաստացի իրավիճակի ուսումնասիրության, վերլուծության և գնահատման արդյունքների վրա՝ կարելի է արձանագրել համայնքում ներկայումս առկա **ընդհանուր և ոլորտային հիմնական հիմնախնդիրները**: Դրանք են՝

- Համայնքի կազմի մեջ ընդգրկված բնակավայրերը (բացի Թումանյան քաղաքից), չունեն գլխավոր հատակագիծ, համայնքը չունի քաղաքաշինական ծրագրային այլ փաստաթղթեր,
- համայնքի բոլոր բնակավայրերում խմելու ջրի ջրամատակարարման ենթակառուցվածքների ոչ բարվոք վիճակ, ջրամատակարարման ոչ բավարար մակարդակ,
- համայնքի բնակավայրերի միջև տրանսպորտային հաղորդակցության և այս կամ այն բնակավայրում մատուցվող ծառայություններից օգտվելու սահմանափակ հնարավորությունները,
- Լորուտ, Շամուտ, Քարինջ, Մարց, Չկալով բնակավայրերում մշակույթի տների կամ համայնքային կենտրոնների բացակայությունը, Աթան, Ահնիձոր բնակավայրերի ակումբների վերանորոգման կարիք և լիարժեք գործելու սահմանափակ հնարավորություններ,
- Գյուղական բոլոր բնակավայրերը չունեն ջրահեռացման կենտրոնացված համակարգ (կոյուղի),
- Համայնքը չունի ժամանակակից աղբավայր, աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ տնտեսական բազա և ֆինանսական հնարավորություններ՝ իր կազմի մեջ մտնող բոլոր բնակավայրերում աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցման համար,
- Համայնքը չունի գյուղատնտեսական հողերի ոռոգման համակարգ, որի պատճառով համայնքի գյուղատնտեսական նշանակության վարելահողերը մեծամասամբ չեն մշակվում, դրանք աստիճանաբար վեր են ածվել խոտհարքների, իսկ վերջիններիս տարածքները չեն բավականացնում համայնքում անասնապահության հետագա զարգացման համար,
- Համայնքի բնակիչներն ունեն լուրջ խնդիրներ ու դժվարություններ՝ արտադրված գյուղատնտեսական մթերքներն իրացնելու, մինչև շուկա հասցնելու հարցում,
- Միայն Չկալով համայնքում դեռևս չկա նախակրթարան:
- Աթան, Շամուտ, Ահնիձոր բնակավայրերում չկա գազամատակարարում, Լորուտ, Մարց բնակավայրերում առկա է գազամատակարարման ներքին ցանցի անցկացման խնդիրներ,
- համայնքի գրեթե բոլոր դպրոցների շենքերը (բացառությամբ՝ Մարց գյուղի և Դսեղի) կարիք ունեն մասնակի կամ ամբողջական ընթացիկ նորոգման, ներքին հարդարման և դուռ-պատուհանների, սանհանգույցների փոխարինման,
- համայնքի բնակավայրերի վարչական ներկայացուցիչների նստավայրերը, բոլոր մանկապարտեզները, Թումանյան քաղաքի արվեստի դպրոցը, բոլոր գյուղերի համայնքային սեփականություն համարվող գրադարանները, մշակույթի տները և ակումբները, Աթանի, Ահնիձորի, Շամուտի, Չկալովի, Քարինջի դպրոցների շենքերը, գրեթե բոլոր բուժական կաբարձական կետերը չունեն ջեռուցման համակարգեր, որի պատճառով այդ հիմնարկները ձմռանը ստիպված են իրենց շենքերը տաքացնել էլեկտրական կամ վառելիքայտի վառարանների միջոցով,
- համայնքի գերեզմանատներից մի մասը ցանկապատված չեն կամ առկա է ցանկապատերի վերանորոգման խնդիր,
- համայնքի բոլոր բնակավայրերից տարեցտարի արտագաղթն իր բացասական ազդեցությունն է թողնում դպրոցների աշակերտների, մանկապարտեզների սաների

թվերի վրա, որոնք վերջին տարիներին անընդհատ նվազում են՝ իր բոլոր բացասական հետևանքներով հանդերձ,

- համայնքի աշխատունակ բնակչության մոտ 46,7 %-ը չունի մշտական աշխատանք, այդ պատճառով հաճախ բնակիչների մի որոշակի մասը մեկնում է արտագնա աշխատանքի այլ երկրներ, մեկնողներից ոչ բոլորն են վերադառնում համայնք,
- համայնքի տարածքում առկա եկեղեցիների և մատուռների մի մասը կիսավեր վիճակում են:

Համայնքի հիմնախնդիրների ցանկը կարելի է շարունակել, սակայն, ակնհայտ է, որ հնգամյա ժամանակահատվածում անհնար է լուծում տալ համայնքում առկա բոլոր հիմնախնդիրներին: Վերևում թվարկված հիմնախնդիրներից անհրաժեշտ է առանձնացնել նրանք, որոնց լուծումն, իրատեսականության տեսանկյունից, նպատակահարմար է ներառել համայնքի 2022-2026թթ. ՀԶԲԾ-ում՝ ելնելով համայնքի ռեսուրսային հնարավորություններից և համայնքի հետագա զարգացման՝ ՏԻՄ-երի ընտրած ռազմավարությունից և սահմանած հիմնական նպատակներից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒ ԹՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂԿՈՂՄԵՐԸ

- Համայնքի աշխարհագրական լավ դիրքը (մոտիկությունը մարզկենտրոն Վանաձորին, տարածաշրջանային կենտրոն Ալավերդուն, համայնքի տարածքով անցնող հանրապետական նշանակության Վանաձոր-Ալավերդի ճանապարհը)
- Համայնքում գյուղատնտեսության զարգացման համար առկա հողային բավականին մեծ ռեսուրսների առկայությունը
- Համայնքի բոլոր բնակավայրերում արտաքին (գիշերային) լուսավորության համակարգերի առկայությունը
- Համայնքի համեմատաբար բարենպաստ կլիման, գեղատեսիլ բնությունը
- Համայնքի բոլոր բնակավայրերին հարակից անտառամերձ գոտու առկայությունը
- Համայնքի բոլոր բնակավայրում հանրակրթական դպրոցների և բուժակման կաբարձական կետերի գործելը
- Աթան, Շամուտ, Ահնիձոր, Մարց բնակավայրերում նախակրթարանների առկայությունը, Թումանյանում, Դսեղում, Լորուտում, Քարինջում մանկապարտեզների գործելը
- Համայնքում հեռախոսակապի և հեռուստատեսության առկայությունը
- Թումանյան և Դսեղ համայնքներում կաբելային ինտերնետ և հեռուստատեսային կապերի առկայությունը
- Համայնքի բոլոր բնակավայրում խմելու ջրի ներհամայնքային համակարգերի առկայությունը
- Համայնքի կենտրոնում «Թումանյան քաղաքի մանկական արվեստի դպրոց» և «Թումանյանի քաղաքային համայնքի կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ-ների գործելը
- Համայնքի տարածքում Հովհ. Թումանյանի տուն-թանգարանի, նշանավոր Քոբայրի, Դսեղի Սուրբ Գրիգոր բարձրաքաշ, Քառասնից մանկանց վանական համալիրների,

պատմամշակութային հուշարձանների (եկեղեցիներ, մատուռներ, ամրոցներ, գյուղատեղիներ) առկայությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

- Միջբնակավայրային և ներբնակավայրային ճանապարհների և փողոցների անբարեկարգ վիճակը
- Համայնքի բոլոր բնակավայրերում խմելու ջրի ջրամատակարարման ենթակառուցվածքների ոչ բարվոք վիճակը և ջրամատակարարման ոչ բավարար մակարդակը
- Լորուտ, Շամուտ, Քարինջ, Մարց բնակավայրերում մշակույթ տների կամ համայնքային կենտրոնների բացակայությունը, Աթան, Ահնիձոր բնակավայրերի ակումբների ոչ բարվոք վիճակը
- Գյուղական բոլոր բնակավայրերում ջրահեռացման կենտրոնացված համակարգերի (կոյուղու) բացակայությունը
- Համայնքում աղբահանության ծառայության կազմակերպման փոքր մասշտաբը և ցածր մակարդակը, ժամանակակից աղբավայրի, աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ տնտեսական բազայի և ֆինանսական հնարավորությունների բացակայությունը
- Ոռոգման ներհամայնքային և ներբնակավայրային համակարգերի բացակայությունը
- Միջբնակավայրային հասարակական տրանսպորտի բացակայությունը՝ ապահովելու մշտական հաղորդակցություն մարզկենտրոնի, տարածաշրջանային և համայնքի կենտրոնների հետ
- Աթան, Շամուտ, Ահնիձոր բնակավայրերում գազամատակարարման բացակայությունը, Լորուտ, Մարց բնակավայրերում գազամատակարարման ոչ լրիվ ներքին ցանցի առկայությունը
- Համայնքում արտադրված գյուղատնտեսական մթերքներն իրացնելու, մինչև շուկա հասցնելու բազմաբնույթ խնդիրների ու դժվարությունների առկայությունը
- Համայնքում աշխատատեղերի խիստ պակասը, գործազրկության բարձր մակարդակը
- Համայնքում սոցիալապես խոցելի ընտանիքների մեծ թիվը
- Չկալով բնակավայրում նախակրթարանի բացակայությունը,
- Համայնքի վարչական ներկայացուցիչների նստավայրերի, բոլոր մանկապարտեզների, Թումանյան քաղաքի արվեստի դպրոցի, բոլոր գյուղերի համայնքային սեփականություն համարվող գրադարանների, մշակույթի տների, ակումբների, Աթանի, Ահնիձորի, Շամուտի, Քարինջի դպրոցների, գրեթե բոլոր բուժակման կաբարձական կետերի շենքերում ջրի և (կամ) ջեռուցման համակարգերի բացակայությունը, դրանց գործարկման դժվարությունները ձմռան ընթացքում
- Համայնքի բոլոր բնակավայրերից տարեցտարի շարունակվող արտագաղթը՝ իր բոլոր բացասական հետևանքներով
- Համայնքի գերեզմանատներից մի մասի ցանկապատված չլինելը կամ ցանկապատերի վերանորոգման խնդիրը
- Համայնքի տարածքում առկա եկեղեցիների և մատուռների մի մասի կիսավեր վիճակը, բնակչության հոգևոր կարիքների բավարարմանը չնպաստելը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Համախմբել նախկին փոքր համայնքներում փոշիացած մարդկային, գույքային ու ֆինանսական ռեսուրսները և ապահովել օրենքով ՏԻՄ-երին վերապահված սեփական լիազորությունների ամբողջական ու լիարժեք իրականացումը
- Խելամտորեն օգտագործել ստեղծված լավ հնարավորությունը, որ համայնքը ձևավորվել է համայնքների խոշորացման պետական ծրագրով, գտնվում է ՀՀ կառավարության, միջազգային դոնոր և տեղական կազմակերպությունների ուշադրության կենտրոնում, աստիճանաբար մեծացնել համայնքում առկա խնդիրների լուծմանը նրանց ներգրավվածության շրջանակները
- Խթանել ՔՀՄՀ-ից որակյալ մասնագետների հոսքը համայնքի աշխատակազմ և համայնքային կազմակերպություններ՝ հնարավորինս բարձրացնելով համայնքային ծառայողների և այլ աշխատողների աշխատավարձերի դրույքաչափերը
- Էականորեն բարձրացնել համայնքի բյուջեի սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը՝ ի հաշիվ ավելի որակյալ մասնագետների աշխատանքի, տեղեկատվական արդի համակարգերի ներդրման և արդյունավետ շահագործման
- Բարձրացնել ՏԻՄ-երի ինքնուրույնության մակարդակը՝ մշակելով և իրականացնելով նպատակամետ ու արդյունքահեն համայնքային քաղաքականություններ, ռազմավարություններ և ծրագրեր
- Աստիճանաբար ընդլայնել համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների շրջանակը, կիրառել յուրաքանչյուր ծառայության մատուցման մասշտաբի էֆեկտը (նվազեցնելով ծառայության միավորի վրա կատարվող ծախսերը), ըստ այդմ՝ բարձրացնել ծառայությունների մատուցման ծավալները և արդյունավետությունը, և, որպես հետևանք, բնակչությանը դրանց հասանելիության և որակի մակարդակները
- Էականորեն մեծացնել համայնքի տարածքում տնտեսական գործունեության խրախուսմանն ուղղված հնարավորությունները՝ կապված համայնքի սեփականություն համարվող հողային, գույքային և ֆինանսական ռեսուրսների բազային ծավալների մեծացման և դրանց նպատակային օգտագործման հետ
- Համայնքի ընդլայնված տարածքում նպաստել տնտեսության տարբեր ճյուղերի (հատկապես՝ գյուղատնտեսության, փոքր և միջին բիզնեսի, տուրիզմի և այլնի) զարգացմանը՝ օգտվելով համայնքում բնական պաշարների, պատմամշակութային և այլ արժեքների առկայությունից
- Նպաստել համայնքի տարածքային համաչափ զարգացմանը՝ տեղային «աճի բևեռների» ստեղծման և զարգացման, համայնքի սոցիալ-տնտեսական մրցունակության և գրավչության բարձրացման շնորհիվ
- Մեղմացնել համայնքում ՏԻ վրա բնակիչների ազգակցական կապերի հնարավոր բացասական ազդեցությունները
- Նպաստել համայնքի ավագանու ինստիտուտի կայացմանը, որի շնորհիվ կուժեղանա համայնքի ներքին վերահսկողության համակարգը և, արդյունքում, կբարձրանա համայնքի ընդհանուր կառավարման արդյունավետությունը

- Բարձրացնել համայնքի ՏԻՄ-երի փոխհարաբերությունների և համագործակցության մակարդակը ՀՀ պետական կառավարման մարմինների հետ՝ նպաստելով համայնքի աստիճանական զարգացմանը
- Հնարավորինս արագ կայանալ և պատրաստ լինել՝ ընդունելու և իրականացնելու ՏԻՄ-երին օրենքով ակնկալվող նոր սեփական և պատվիրակված լիազորություններ՝ համապատասխան ֆինանսական միջոցներով
- Համայնքում ստեղծել լուրջ նախադրյալներ և նպաստավոր պայմաններ ժողովրդագրական աճի, սոցիալ-տնտեսական և տեղական ժողովրդավարության զարգացման համար՝ հիմնելով նոր աշխատատեղեր, ավելացնելով ընտանիքների եկամուտները և բարձրացնելով բնակչության ընդհանուր կենսամակարդակը, հաղթահարելով աղքատությունը և կանխելով արտագաղթը
- Տարբեր դասընթացների և վերապատրաստման կուրսերի միջոցով գյուղատնտեսությունը դարձնել ավելի ժամանակակից, որի արդյունքում կդառնա ավելի եկամտաբեր
- Համայնքի վարչական տարածքում զարկ տալ ջերմոցների ստեղծմանը՝ նպաստելով գյուղատնտեսության զարգացմանը
- Համայնքի ամբողջական գազաֆիկացումը նկատելիորեն կնպաստի համայնքի բնակչության կենցաղային կարիքների բավարարմանը, կփրկի համայնքի անտառային ֆոնդը ոչնչացումից
- Վերականգնվող էներգետիկայի ներգրավումը (արևային կայաններ, ջրատաքացուցիչներ, բիոգազի կայաններ) կնպաստի համայնքի բնակիչների հոգսերի թեթևացմանը:
- Տարածաշրջանի այլ համայնքների հետ միջհամայնքային համագործակցություն ծավալելու դեպքում հնարավոր կլինի լուծել ընդհանուր աղբավայր ունենալու և շահագործելու հարցը, համայնքում պատշաճ մակարդակով կազմակերպելու աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցումը
- Ներհամայնքային տրանսպորտային հաղորդակցության, ինչպես նաև հաղորդակցության այլ միջոցների հասանելիության ապահովման միջոցով նպաստել ՏԻՄ-երի գործունեության արդյունավետության, համայնքային ծառայությունների մատուցման մակարդակի կտրուկ բարձրացմանը, արտաքին աշխարհի հետ նոր կապերի ու համագործակցության հաստատմանը և համայնքային տնտեսությունում լրացուցիչ ներդրումների ապահովմանը:

ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՎՏԱՆԳՆԵՐԸ

- Համայնքի մեջ ընդգրկված փոքր բնակավայրերից բնակիչների հնարավոր արտահոսք դեպի մարզկենտրոն և մայրաքաղաք
- Համայնքի կենտրոնի, որպես տարաբնակեցման տեղային կենտրոնի, զարգացմանը չափից դուրս մեծ ուշադրության դարձումը (ի հաշիվ համայնքի կազմում ընդգրկված այլ բնակավայրերի) կվատացնի համայնքի փոքր բնակավայրերի սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական վիճակը՝ վնասելով համայնքի համաչափ զարգացմանը
- ԲԲՀ-ի կառավարման փորձի պակասը և արդյունավետության ապահովման իրատեսականությունը
- Համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի բնակիչների հարկային պարտավորությունների կատարման ոչ բավարար վիճակը

- Անհրաժեշտ ռեսուրսների անբավարարությունը, ինչպես նաև համայնքի ՏԻՄ-երի հստակ և նպատակային ծրագրերի բացակայությունը (հատկապես ԲԲՀ-ի ՏԻՄ-երի գործունեության սկզբնական շրջանում) կարող են առաջացնել համայնքի բնակիչների՝ ինչ-որ տեղ հիմնավորված թերահավատությունը, հիասթափությունը և անվստահությունը ՏԻՄ-երի նկատմամբ
- Խմելու ջրի ջրամատակարարման ներհամայնքային համակարգերի մաշվածության և բաց ավազանների առկայության պատճառով համայնքում սուր վարակիչ հիվանդությունների առաջացման վտանգը
- Միջբնակավայրային և ներբնակավայրային ճանապարհներին քարաթափումների և սողանքների վտանգը
- Ներհամայնքային փողոցներում և ճանապարհներում ջրահեռացման հեղեղատների բացակայության պատճառով դրանց վիճակի էլ ավելի վատթարացման վտանգը
- Աղբավայրի բացակայության պատճառով համայնքի տարածքում բնության ու շրջակա միջավայրի աղտոտման և վնասման վտանգը
- Համայնքում հողագործությամբ զբաղվելու անհեռանկարայնությունը վտանգում է գյուղատնտեսության այդ ճյուղի զարգացումը
- Համայնքի երիտասարդների արտագաղթը, արտերկրներ աշխատանքի մեկնելը և չվերադառնալը վտանգում է համայնքի կենսագործունեությունը:

2. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԱԿԱՆԻ, ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆԵՎ ՀԶԾ-Ի ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Համայնքի տեսլականն է՝

Թումանյան համայնքը դարձնել զբոսաշրջության, գյուղատնտեսական մթերքների արտադրության, հատապտուղների վերամշակման, մաքուր, բարեկարգ, առևտրի և սպասարկման, կրթական և մշակութային զարգացած ենթակառուցվածքներ, բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող գրավիչ տարածք:

Համայնքի սահմանված տեսլականին հասնելու համար **համայնքի ռազմավարությունն է՝**

- չխորացնել համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի միջև առկա տարբերությունները և զարգացման անհամաչափությունները, ապահովել բնակավայրերի աստիճանական ինտեգրումը և համաչափ զարգացումը,
- համայնքում անասնապահության զարգացում և անասնապահական մթերքների արտադրության ծավալների աստիճանական մեծացում՝ անասնագլխաքանակի տարեցտարի ավելացման և անհրաժեշտ քանակությամբ անասնակերի ապահովման միջոցով,
- համայնքում կաթի, մսի, հատապտուղների հանձնման և վերամշակման արտադրամասերի ստեղծում և գործարկում,
- համայնքում մեղվապահության ընդլայնում և էկոլոգիապես մաքուր մեղրի արտադրության աստիճանական զարգացում,
- համայնքի տարածքի համեմատական առավելությունների բացահայտում և առևտրայնացում, այդ նպատակով պետական կառավարման և տեղական

ինքնակառավարման մարմինների, ՔՀՄՀ-ի կազմակերպությունների համագործակցության շրջանակների ընդլայնում և ջանքերի մեկտեղում,

- համայնքում էկոտուրիզմի ենթակառուցվածքների ստեղծում և զարգացում՝ զբոսաշրջիկների գիշերակացի տնային պայմանների ապահովման, հասարակական սննդի, առևտրի և կենցաղսպասարկման օբյեկտների ստեղծման, համապատասխան ծառայությունների պատշաճ մակարդակով մատուցման միջոցով,
- համայնքի սեփականություն համարվող ենթակառուցվածքների պահպանում, շահագործում, նորոգում և զարգացում,
- միջբնակավայրային և ներբնակավայրային ճանապարհների և փողոցների նորոգում և բարեկարգում, ջրահեռացման և արտաքին լուսավորության համակարգերի անցկացում, ճանապարհային նշանների տեղադրում, ավտոկանգառների ժամանակակից տաղավարների կառուցում,
- համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների բարելավում՝ նրանց մատուցվող հանրային ծառայությունների տեսակների (ջրամատակարարում և ջրահեռացում, գազամատակարարում, էլեկտրամատակարարում, աղբահանություն և սանիտարական մաքրում, տրանսպորտ և կապ, նախադպրոցական և դպրոցական կրթություն, արտադպրոցական դաստիարակություն, մշակույթ, առողջապահություն և սպորտ, սոցիալական պաշտպանություն և այլն) շրջանակի աստիճանական ընդլայնման, հասանելիության ու մատչելիության ապահովման և որակի անշեղ բարձրացման միջոցով,
- համայնքի ՏԻՄ-երի, աշխատակազմի, համայնքային կազմակերպությունների ինստիտուցիոնալ կարողությունների աստիճանական հզորացում, տեղական ժողովրդավարության ամրապնդում, համայնքում պատշաճ կառավարման սկզբունքների հետևողական իրականացում,
- ՏԻ-անը բնակիչների ներգրավվածության բարելավում՝ բնակիչների մասնակցության ձևերի ներդրման և զարգացման միջոցով,
- ՏԻՄ-երի գործունեության թափանցիկության, հրապարակայնության և հաշվետվողականության մակարդակների հետևողական բարձրացում,
- համայնքի ֆինանսական կառավարման համակարգում հստակ մեխանիզմների ներդրում և հետևողական կիրառում,
- նոր աշխատատեղերի ստեղծում և համայնքից միգրացիայի նվազեցում, բնակչության թվաքանակի կայունացում:

Համայնքի զարգացման 2022-2026թթ. հնգամյա ծրագրի հիմնական նպատակներն

են՝

- ՏԻ-անը բնակիչների մասնակցության ակտիվացում՝ մասնակցության նոր մեթոդների և ձևերի ներդրման և աստիճանական զարգացման միջոցով,
- համայնքում գյուղատնտեսության (հողագործության, անասնապահության, այգեգործության, թռչնապահության, մեղվապահության) զարգացում՝ տնամերձերի, վարելահողերի, խոտհարքների և արոտավայրերի նպատակային և արդյունավետ օգտագործման միջոցով,
- միջբնակավայրային և ներբնակավայրային ճանապարհների և փողոցների վիճակի բարելավում և լուսավորության ցանցի ընդլայնում,
- համայնքի կենտրոնի հետ բոլոր բնակավայրերի հասարակական տրանսպորտի գործունեության ապահովում, բոլոր բնակավայրերում ավտոկանգառների ստեղծում,

- համայնքի բոլոր բնակավայրերում նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության ոլորտներում պայմանների ընդլայնում և բարելավում,
- համայնքի բնակչության կենցաղային պայմանների բարելավում՝ առանձնատների գազաֆիկացման, խմելու և տեխնիկական ջրի ջրամատակարարման արտաքին և ներբնակավայրային համակարգերի նորոգման և շահագործման, աղբահանության և սանիտարական ծառայությունների կազմակերպման և մատուցման ճանապարհով,
- համայնքի դպրոցական հանրակրթության պայմանների բարելավում՝ դպրոցների շենքերի նորոգման և ջեռուցման, ներքին հարդարման, դռների, պատուհանների և սանհանգույցների փոխարինման միջոցով,
- համայնքի բնակչությանը հանրային ծառայություններ մատուցող համայնքային հիմնական ենթակառուցվածքների (բնակավայրերի վարչական ներկայացուցիչների նստավայրերի, մանկապարտեզների, մշակույթի տների և ակումբների, գրադարանների, բուժկետերի) շենքերի հիմնանորոգում կամ վերակառուցում,
- համայնքում գործարար միջավայրի բարելավում՝ նոր աշխատատեղեր ստեղծող անհատներին և կազմակերպություններին խրախուսելու (օրինակ, տեղական հարկերի, տուրքերի և վճարների գծով արտոնություններ տրամադրելու) միջոցով:

3. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ (ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ) ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ, ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

2022-2026թ.թ. ընթացքում համայնքի ՏԻՄ-երը նախատեսում են լայնորեն համագործակցել պետական կառավարման մարմինների, միջազգային և տեղական կազմակերպությունների, ԲՀՄՀ-ի և այլ շահագրգիռ կողմերի հետ:

Համայնքում պետության կողմից ներդրումներ ապահովելու նպատակով, նախատեսվում է սերտ համագործակցություն ՀՀ Լոռու մարզպետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների հետ: Որպես պետական կառավարման մարմինների հետ համայնքի համագործակցության հիմնական ուղղություններ, 2022-2026թ.թ.-ին նախատեսվում են հետևյալ հանրապետական և մարզային ծրագրերն ու միջոցառումները՝

- Համայնքում գյուղատնտեսության զարգացում՝ պարարտանյութերի, թունաքիմիկատների, սերմացուի, գյուղտեխնիկայի ձեռքբերման, գյուղացուն ձեռնտու պայմաններով (երկարաժամկետ, շուկայականից ցածր տոկոսադրույքով, առանց գրավի) գյուղատնտեսական վարկերի տրամադրման, գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման, խորհրդատվության ու աջակցության և այլ ուղղություններով:
- Պետություն-համայնք համագործակցության միջոցով սուբվենցիոն ծրագրերի ներգրավվում, որով կբարելավվեն բնակավայրերում առկա առաջնային խնդիրները, հատկապես ենթակառուցվածքները:
- Թումանյանի համայնքապետարանի շենքի, 3-րդ փողոցի N 6,7,8, 5-րդ փողոցի N 3 բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում:
- Քոբայրավանքի, Սուրբ Գրիգոր բարձրաքաշ, քառասնից մանկանց վանքերի վերանորոգում՝ նպաստելով համայնքում զբոսաշրջության զարգացմանը:
- Զբոսաշրջային արահետների մաքրման, կահավորման, ինչպես նաև նոր արահետների կառուցման աշխատանքեր, որն ավելի է հետաքրքրում ժամանակակից զբոսաշրջիկին:

- Ահնիժոր, Մարց, Աթան, Չկալով գյուղերում բուժականակաբարձական կենտրի շենքերի հիմնանորոգում:
- Աթան գյուղում նախկին մանկապարտեզի շենքի հիմնանորոգում և բնակավայրային կենտրոնի ստեղծում, որի շահագործմամբ հնարավորություն կստեղծվի այդտեղ տեղակայել վարչական ներկայացուցչի նստավայրը, բուժականակաբարձական կենտր, հանդիսությունների սրահը՝ նոր մակարդակի բարձրացնելով այդ ենթակառուցների գործունեությունը, ակտիվացնելով բնակիչների մասնակցությունը ՏԻ-անը:
- Համայնքի հանրակրթական դպրոցների շենքերի ընթացիկ նորոգում, ներքին հարդարում, դռների, պատուհանների և սանհանգույցների փոխարինում, ջեռուցում՝ բարելավելով դպրոցական հանրակրթության որակը:
- Դսեղ բնակավայրում պետական ֆինանսավորմամբ կառուցված, սակայն 4 տարի չշահագործված ջրագծերի ցանցի ընդունում շինարարից և համայնքի ջրամատակարարման արդիականացում:
- Դսեղ բնակավայրում ակտիվացող զբոսաշրջային կենտրոնների կառուցման պայմաններում համայնքային կոյուղու ներքին ցանցի կառուցում:
- Համայնքի բոլոր բնակավայրերի ջրամատակարարման համակարգերի հիմնանորոգում կամ մասնակի վերանորոգում և ջրամատակարարման բարելավում՝ համագործակցության ներգրավելով «Վեոլա ջուր» ՓԲԸ-ին:
- Մարզկենտրոն Վանաձորի, տարածաշրջանային կենտրոն Ալավերդու և Թումանյան քաղաքի հետ մշտական հասարակական տրանսպորտային հաղորդակցության կազմակերպում և շահագործում՝ համագործակցության ներգրավելով մարզի մասնավոր տրանսպորտային կազմակերպություններին:
- Առողջապահության և սոցիալական պաշտպանության ոլորտներում համայնքի բնակչությանը հանրային ծառայությունների հասանելիության և մատուցման մակարդակի բարձրացում՝ պետական պատվերի շրջանակներում:
- Աղետների ռիսկի կառավարման ոլորտում համայնքի բնակչության լայն իրազեկում, արտակարգ իրավիճակներում համայնքի գործողությունների պլանի կազմում և իրականացում, կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում և իրականացում:
-

2022-2026թթ. ընթացքում կշարունակվեն համայնքի և ՀՀ Լոռու մարզում գործունեություն ծավալող՝ միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների, ՔՀՄՀ-ի սուբյեկտների, այլ կազմակերպությունների և անհատների համագործակցության շրջանակներում նախատեսվող ներդրումային, դրամաշնորհային, տեխնիկական աջակցության, բարեգործական ծրագրերը և միջոցառումները: Մասնավորապես, նախատեսվում է շարունակել համայնքի սերտ համագործակցությունը «Հայաստանի մանուկների հիմնադրամ» բարեգործական կազմակերպության, Ալավերդու «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ի, «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի, ՀԿ կենտրոն հասարակական կազմակերպության, նախադպրոցական և դպրոցական կրթության, առողջապահության, երեխաների սոցիալական պաշտպանության, մշակույթի և սպորտի, տեղական ժողովրդավարության և մասնակցության, զբոսաշրջության, մարդու իրավունքների, համայնքային զարգացման և այլ ոլորտներում:

4. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄ, ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Վերլուծելով համայնքի կազմի մեջ մտնող բնակավայրերի՝ նախկին համայնքների 2020-2021թթ. բյուջեների մուտքերի ցուցանիշները (**աղյուսակ 3**), տեսնում ենք, որ նախկին համայնքների 2020թ. բյուջեների փաստացի կատարողական ընդհանուր մուտքերը՝ **297056,5** հազ. դրամ, 2021թ.-ին աճել են մոտ 13 %-ով և կազմել **340190,9** հազ. դրամ: Դա հիմնականում պայմանավորված է եղել երեք հանգամանքներով՝

1) 2021թ.-ին համայնքը ստացել է ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ **221002,7** հազ. դրամ, իսկ 2020թ.-ին այդ նույն ուղղությամբ՝ ընդամենը **213096,5** հազ. դրամ,

2) 2021թ.-ին ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհները կազմել են՝ հազ. դրամ, 2014թ.-ին այդ նույն ուղղությամբ՝ դրամաշնորհներ չեն եղել,

3) 2022թ.-ին կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհները կազմել են՝ 5,155.8 հազ. դրամ, իսկ 2021թ.-ին այդ նույն ուղղությամբ՝ ընդամենը 310.2 հազ. դրամ:

Դրա հետ մեկտեղ, պետք է նկատել նաև այն, որ նախկին համայնքների սեփական փաստացի եկամուտները 2020թ.-ին կազմել են ընդամենը 23,318.5 հազ. դրամ, այնինչ 2021թ.-ին՝ ընդամենը 21,504.8 հազ. դրամ, կամ նվազել են 7.8 %-ով, իսկ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները 2020թ.-ին կազմել են 113096,5 հազ. դրամ, 2021թ.-ին՝ 121002,7 հազ. դրամ, կամ աճել են 9.03%-ով:

Վերլուծելով համայնքի կազմի մեջ մտնող նախկին համայնքների տարեկան, օրինակ՝ 2021թ., բյուջեի փաստացի մուտքերի ուղղությունների տեսակարար կշիռներն ընդհանուր մուտքերի մեջ, տեսնում ենք, որ սեփական մուտքերի (հարկեր և տուրքեր, այլ եկամուտներ) տեսակարար կշիռն ընդհանուր մուտքերի մեջ կազմել է ընդամենը 18.0%, իսկ պաշտոնական դրամաշնորհների (պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ, պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)) տեսակարար կշիռն ընդհանուր մուտքերի մեջ կազմել է 82.0%: Սա նշանակում է, որ համայնքի կազմի մեջ մտնող նախկին համայնքների բյուջեների մուտքերի ճնշող մեծամասնությունը ստացվել են ՀՀ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների ուղղությամբ, այսինքն նախկին համայնքների ֆինանսական անկախության (ինքնուրույնության) աստիճանն անչափ ցածր է եղել և նրանք մեծ կախվածության մեջ են գտնվել ՀՀ պետական բյուջեից:

Կատարելով համայնքի 2022-2026թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումները՝ պետք է հաշվի առնել երեք հանգամանք՝

1) Համայնքի բյուջեի մուտքերի կանխատեսման համար որպես ելակետային տվյալներ են ընդունվել նախկին 3 համայնքների 2020-21թթ. բյուջեների մուտքերի փաստացի գանձման ցուցանիշները՝ յուրաքանչյուր տարի նախատեսելով որոշակի աճ: Մուտքերի աճը նախատեսվել է՝ հիմք ընդունելով համայնքի հետագա զարգացման հետ կապված պատկերացումներն ու ակնկալիքները, նոր ծառայությունների մատուցման անհրաժեշտությունը և դրանց դիմաց վճարների գանձման հնարավորությունները և այլն:

2) ՀՀ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների գումարները կանխատեսելու համար, որպես 2022թ. ցուցանիշ հիմք է ընդունվել 2022թ. նախկին 7 համայնքների համար ՀՀ պետական բյուջեում նախատեսված դոտացիաների գումարների հանրագումարը: Հաջորդ տարիների ցուցանիշները կանխատեսելու համար համապատասխանաբար նախորդ տարվա ցուցանիշն ավելացվել է 49

%-ով (2021թ. համեմատ 2022թ. բոլոր համայնքներին տրամադրվող դոտացիաների ընդհանուր գումարի աճի տեմպը):

3) Պետական բյուջեից նպատակային հատկացումների կանխատեսման համար հաշվի է առնվել այն հանգամանքը, որ ներհամայնքային (միջբնակավայրային) ճանապարհները, որոնք նախկինում համարվում էին միջհամայնքային, անհրաժեշտ է պահպանել և սպասարկել: Այդ ճանապարհների պահպանության համար նախկինում գումարներ են հատկացվել ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին: Դրանց ներհամայնքային (միջբնակավայրային) դառնալուց հետո, անհրաժեշտ է, նպատակային հատկացումների տեսքով, այդ գումարները ՀՀ պետական բյուջեից փոխացել համայնքի բյուջե:

**Աղյուսակ 3. Համայնքի 2020-2021 թ.թ. բյուջեների մուտքերի ցուցանիշները և 2022-2026 թ.թ. բյուջեների մուտքերի կանխատեսումը
Հազար դրամ**

Հ/հ	Մուտքերի անվանումը	2020թ. փաստ.	2021թ. նախատ.	2021թ. փաստ.	2022թ. նախատ.	2023թ. կանխ.	2024թ. կանխ.	2025թ. կանխ.	2026թ. կանխ.
1	2	3	4	5	6	7	8	9	10
	ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ (I+II+III)*	297056,5	346458,0	340190,9	359474,2	361584,1	373965,8	381453,4	395842,6
I.	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (1+2+3)*	207092,4	251717,9	245304,8	308675,2	317542,9	325412,0	338422,0	341287,6
1.	ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ	33394,2	46930,8	35541,6	54353,4	56987,2	57125,3	58695,7	59472,0
1.1	Գույքային հարկեր անշարժ գույքից	25473,7	20724,1	12983,3	21335,7	22985,2	23195,1	23312,9	24736,2
	Գույքահարկ շենքերի և շինությունների համար	768,9	36,0	405,6	320,0	320,0	320,0	320,0	320,0
	Հողի հարկ	14704,8	2959,0	8625,9	4500,0	4500,0	4500,0	4500,0	4500,0
	Համայնքի բյուջե մուտքագրվող անշարժ գույքի հարկ	0	17729,1	3951,8	16515,7	16515,7	16932,8	17215,4	18526,2
1.2	Գույքային հարկեր այլ գույքից	16705,4	25140,6	21455,9	31757,7	31757,7	31757,7	31757,7	31757,7
	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	16705,4	25140,6	21455,9	31757,7	33214,5	34215,8	35698,1	37423,3
1.3	Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ	1215,1	1066,1	1102,3	1260,0	1260,0	1260,0	1260,0	1260,0
	Տեղական տուրքեր	1215,1	1066,1	1102,3	1260,0	1260,0	1260,0	1260,0	1260,0
1.4	Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ	0	0	0	0	0	0	0	0
	Պետական տուրքեր	0	0	0	0	0	0	0	0
1.5	Այլ հարկային եկամուտներ	0	0	0	0	0	0	0	0
	Այլ հարկերից և	0	0	0	0	0	0	0	0

	պարտադիր վճարներից կատարվող մասհանումներ								
	Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում այդ հարկերի գումարների նկատմամբ	0	0	0	0	0	0	0	0
2.	ՊԱՇՏՈՆԱԿԱՆԴՐԱՄ ԱՇՆՈՐՀՆԵՐ	113096,5	121002,7	197749,1	237798,9	237798,9	237798,9	237798,9	237798,9
2.1	Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ								
2.2	Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ								
2.3	Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ	162759,6	191876,6	197749,1	237798,9	237798,9	237798,9	237798,9	237798,9
ա)	Պետականբյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	158382,3	191876,6	191876,6	195390,9	195390,9	195390,9	195390,9	195390,9
բ)	Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ	4377,3	4377,3	4377,3	4377,3	4377,3	4377,3	4377,3	4377,3
գ)	Պետականբյուջեիցտրամադրվողնպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)	1500,0	29126,1	5872,5	42408,0	42408,0	42408,0	42408,0	42408,0
դ)	ՀՀայլիհամայնքներիբյուջեներիցընթացիկծախսերիֆինանսավորմաննպատակովստացվողպաշտոնականդրամաշնորհներ								
2.4	Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ	48836,9	29126,1	5872,5	5872,5	5872,5	5872,5	5872,5	5872,5
ա)	Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ								

	(սուբվենցիաներ)								
բ)	ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ								
3.	ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ*	14822,8	12910,5	12014,2	16522,9	17284,3	17563,7	17846,3	18547,3
3.1	Տոկոսներ		0	0	0	0	0	0	0
3.2	Շահաբաժիններ								
3.3	Գույքի վարձակալությունից եկամուտներ	4189,9	4259,9	4342,2	5072,9	5124,2	5214,2	5236,4	5365,0
	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	3996,5	4207,9	4073,2	4788,4	4788,4	4854,2	4956,3	5002,0
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ								
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության կառավարության համայնքի սեփականության ընդհանուր պատկանողի որոշման հիման վրա ստանալիքի հիմնարկից ստացվող վարձավճարներ								
	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր	193,4	52,0	269,0	284,5	284,5	284,5	284,5	284,5
3.4	Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, այդ թվում		50,0	90,0	101,0	103,0	104,0	105,0	106,0
	Պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ								
3.5	Վարչական գանձումներ	4509,0	7500,6	6611,1	7950,0	7950,0	7950,0	7950,0	7950,0

	Տեղական վճարներ	4478,7	7400,6	5289,9	7950,0	7950,0	7950,0	7950,0	7950,0
	Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համարվճարներ	30,3	100,0	1321,2	200,0	200,0	200,0	200,0	200,0
	Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) վճարներ								
3.6	Մուտքերտույժերից, տուգանքներից								
	Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ-երի կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ								
	Մուտքերի համայնքի բյուջեին կատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող տույժերից								
3.7	Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ								
3.8	Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ	5384,1							
3.9	Այլ եկամուտներ*	739,7			3500,0	4000,0	4500,0	4800,0	4900,0
	Համայնքի գույքի նպատակառաժվանասների փոխհատուցումից մուտքեր								
	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր								
	Օրենքով կիրավականայլակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ	739,7			3500,0	4000,0	4500,0	4800,0	4900,0
II.	ՈՉՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (1+2+3+4)	13366,0	0	5572,8	0	0	0	0	0
1.	Հիմնական միջոցների րացումից մուտքեր	13366,0	0	5572,8	0				
	Անշարժ գույքի րացումի	7955,1	0	157,6					

	ցմուտքեր								
	Շարժական գույքի հրացումից ցմուտքեր								
	Այլ հիմնական միջոցների հրացումից ցմուտքեր								
2.	Պաշարների հրացումից ցմուտքեր								
3.	Բարձրարժեքակտիվների հրացումից ցմուտքեր								
4.	Չարտադրված ակտիվների հրացումից ցմուտքեր								
	Հողի հրացումից ցմուտքեր	5332,9	0	5415,6					
	Ոչ նյութական չարտադրված ակտիվների հրացումից ցմուտքեր								
III.	ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՄ ՊԱԿԱՍՈՒՐԴԻ (ԴԵՖԻՑԻՏԻ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ (Ա+Բ)	35743,1	94740,4	89319,3	50799,0				
Ա.	ՆԵՐՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ (1+2)								
1.	ՓՈԽԱՌՈՒՄԻ ՋՈՏՆԵՐ								
1.1	Արժեթղթեր								
	- թողարկումից և տեղաբաշխումից ցմուտքեր								
	- հիմնական գումարի մարում								
1.2	Վարկեր								
	- վարկերի ստացում								
	- ստացված վարկերի հիմնական գումարի մարում								
1.3	Փոխատվություններ								
	- բյուջետային փոխատվությունների ստացում								
	- ստացված փոխատվությունների գումարի մարում								
2.	ՖԻՆԱՆՍԱԿԱՆԱԿՏԻՎՆԵՐ								
2.1	Բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն								
	- համայնքային սեփականության բաժնետոմսերի և կապիտալում համայնքի մասնակցության հրացումից ցմուտքեր								

	- իրավաբանականանձանց կանոնադրականկապիտալում պետականմասնակցության, պետականսեփականություն հանդիսացողանշարժգույքի (բացառությամբհողերի) , այդթվում՝ անավարտչինարարության անօբյեկտներինանավորեցում իցառաջացածմիջոցներից համայնքիբյուջեմասհանում իցմուտքեր								
	- բաժնետոմսերևկապիտալում այլմասնակցությունները								
2.2	Փոխատվություններ								
	- նախկինումտրամադրված փոխատվությունների դիմացստացվողմարումներից մուտքեր								
	- փոխատվություններիտրամադրում								
2.3	Համայնքիբյուջեիմիջոցներիտարեսկզբիազատմնացորդը	35743,1	94740,4	89319,3	50799,0				
2.4	Համայնքիբյուջեիֆոնդայինմասիժամանակավորազատմիջոցներիտրամադրումվարչականմաս				4535,7				
2.5	Համայնքիբյուջեիֆոնդայինմասիժամանակավորազատմիջոցներիցվարչականմաստրամադրվածմիջոցներիվերադարձֆոնդայինմաս				46263,3				
2.6	Համայնքիբյուջեիհաշվումմիջոցներիմնացորդներըհաշվետուժամանակահատվածում								
	որից՝ ծախսերիֆինանսավորմանըչուղղվածհամայնքիբյուջեիմիջոցներիտարեսկզբիազատմնացորդիգումարը								
Բ.	ԱՐՏԱՔԻՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ								
1.	ՓՈՒՍԱՌՈՒՄԻՋՈՅՆԵՐ								

1.1	Արժեթղթեր								
	- թողարկումիցևտեղաբաշխումիցմուտքեր								
	- հիմնականգումարիմարում								
1.2	Վարկեր								
	-վարկերիստացում								
	- ստացվածվարկերիհիմնականգումարիմարում								
1.3	Փոխատվություններ								
	- փոխատվություններիստացում								
	- ստացվածփոխատվություններիգումարիմարում								

*)Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե հատկացվող գումարը չի մտնում բյուջետային ընդհանուր եկամուտների մեջ

Անհրաժեշտ է նկատել, որ համայնքի գալիք 5 տարիների բյուջեներում ոչ ֆինանսական ակտիվների (հող, գույք) իրացման գծով նախատեսվել են ընդամենը՝ մոտ.22000 հազ. դրամի մուտքեր, իսկ փոխառու միջոցներից (փոխատվություն, վարկ) մուտքեր չեն նախատեսվել: Սա նշանակում է, որ համայնքն իր ֆոնդային բյուջեում կարող է նախատեսել կապիտալ ծախսեր ու ծրագրեր՝ հիմնականում համայնքի վարչական բյուջեի պահուստային ֆոնդից փոխանցելով համայնքի ֆոնդային բյուջե:

Համայնքի ղեկավարի և աշխատակազմի աշխատողների (42,5 միավոր) 2022 թվականի միայն աշխատավարձի տարեկան ֆոնդը նախատեսվել է 82314.3 դրամ (այս գումարի մեջ ներառվել է նաև համայնքի կազմի մեջ մտած բնակավայրերի նախկին համայնքապետարանների աշխատակազմերի աշխատանքից ազատված աշխատողների վերջնահաշվարկի վճարումները), իսկ աշխատակազմի պահպանման մյուս ընդհանուր ծախսերը՝ 20695.0 հազ. դրամ:

Համայնքի 6 ՀՈԱԿ-ների աշխատակիցների 2022 թվականի միայն աշխատավարձի տարեկան ֆոնդը նախատեսվել է 59044908 դրամ, իսկ դրանց պահպանման մյուս ընդհանուր ծախսերը՝ 20540092 դրամ:

Անհրաժեշտ է նաև հաշվի առնել, որ՝

- 2022 թվականին համայնքային կոմունալ տնտեսության կողմից իրականացվելու է «Համայնքի ներհամայնքային ճանապարհների բարեկարգման և սպասարկման, աղբահանության ծառայությունների իրականացման, դպրոցականների ու երիտասարդության շրջանում բնապահպանական և ագրոբիզնեսի կառավարման գիտելիքների տարածում»:
- 2023-2026թթ. ընթացքում համայնքի ՏԻՄ-երը նախատեսում են համայնքի ղեկավարի, աշխատակազմի և ՀՈԱԿ-ների աշխատակիցների աշխատավարձերի և պահպանման այլ ծախսերի բարձրացում՝ տարեկան 5%-ի չափով:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ համայնքի 2022-2026թթ. տարեկան բյուջեներից (տե՛ս աղյուսակ 3) հնարավորություն կլինի կատարելու մոտ 13.0 մլն-ից մինչև 20.0 մլն դրամի ծախսեր կապիտալ աշխատանքներ կատարելու համար, եթե, իհարկե, պայմանականորեն ընդունենք, որ տվյալ տարվա վարչական բյուջեում, բացի համայնքի աշխատակազմի և ՀՈԱԿ-ների պահպանման ծախսերից, գործառական դասակարգման այլ ուղղություններով ընթացիկ ծախսեր չեն նախատեսվելու և չեն իրականացվելու: Իսկ եթե տվյալ տարվա վարչական բյուջեում նախատեսվեն և իրականացվեն այլ ընթացիկ ծախսեր ևս, ապա, բնականաբար, ֆոնդային բյուջեում կապիտալ ծախսերի և ծրագրերի համար նախատեսվող միջոցները կպակասեն համապատասխան չափով:

Այսպիսով, համայնքի տվյալ տարվա ֆոնդային բյուջեում կապիտալ ծախսերի չափն ուղղակիորեն կախված կլինի նրանից, թե որքան կկազմեն ընթացիկ ծախսերի ընդհանուր գումարը համայնքի այդ տարվա վարչական բյուջեում և որքան գումար կմնա ֆոնդային բյուջեում կապիտալ ծախսեր կատարելու համար:

5. ՀԱՄԱՅՆՔԻ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԻ ԿԱԶՄՈՒՄ ԵՎ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ, ՖԻՆԱՆՍԱՊԵՍ ԱՊԱՀՈՎՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԱՄՓՈՓՈՒՄ, ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՅԹԱՅԹՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Ելնելով համայնքի իրավիճակի վերլուծության և գնահատման արդյունքներից, համայնքում ներկայում արձանագրված հիմնախնդիրներից, համայնքի զարգացման՝ ՏԻՄ-երի կողմից ընտրված ռազմավարությունից, առաջիկա հինգ տարիների համար սահմանված հիմնական նպատակներից և ԲԱԽ-երի, ՀՈԱԿ-ների կողմից արված առաջարկություններից, համայնքի ղեկավարին կից գործող ՀԶՀԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ-ի կողմից քննարկվել և որոշվել է առաջարկվող ծրագրերի ցանկը (**աղյուսակ4**)՝ ներառելու համայնքի 2022-2026թթ. ՀԶՀԾ-ում:

Աղյուսակ 4. Համայնքի 2022-2026թթ. ՀԶՀԾ-ում ներառելու համար առաջարկվող ծրագրերի ցանկը

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագիրն առաջարկողը	Ծրագրի մոտավոր արժեքը, ֆինանսավորման աղբյուրը, հազ. դրամ
1.	Համայնքի աշխատակազմի պահպանում, հանրային որակյալ ծառայությունների մատուցում	ԲԱԽ-եր	Համայնքի բյուջե՝ 2022թ.-76,477,6 2023թ.-80,699,2 2024թ.-82,478,5 2025թ.-85,783,6 2026թ.-90,874,1 Ընդամենը՝ 416,313.0
2.	Համայնքապետարանի ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում	ԲԱԽ-եր	Համայնքի բյուջե՝ 2022թ. – 2,158,3 2023թ. – 2,300.0 2024թ.-2,500.0 2025թ.-2,800.0 2026թ.-3,050.0 Ընդամենը՝ 12,808.3
3.	Համայնքում (Թումանյան, Դսեղ, Լորուտ, Քարինջ մանկապարտեզներ), (Աթան, Ահնիձոր, Մարց, Շամուտ, 2023-ից՝ Չկալով) նախադպրոցական կրթության ապահովում և ընդլայնում: Հմայնքապետարանից տրված դրամաշնորհներ:	Թումանյանի, Դսեղի, Լորուտի, Քարինջի ՆՈՒՀ ՀՈԱԿ-ներ, Թումանյանի, Դսեղի, Լորուտի, Քարինջի, ԲԱԽ-եր	ՀՈԱԿ-ների բյուջեներ՝ 2022թ. – 38,550,0 2023թ.- 39,000,0 2024թ.- 41,250.0 2025թ.- 42,625.0 2026թ.- 43,625.0 Ընդհանուրը՝133,853.5
4.	Համայնքում արտադպրոցական դաստիարակության ծառայության	«Թումանյա	ՀՈԱԿ-ի բյուջե՝

	մատուցում	ն քաղաքի մանկական արվեստի դպրոց» ՀՈԱԿ, Թումանյանի ԲԱԽ	7,100.0 (տարեկան) Ընդհանուրը՝ 35,500.
5.	Համայնքի բոլոր բնակավայրերում աղբահանության և սանիտարական մաքրման, ճանապարհաշինության և ջրամատակարարման ծառայությունների մատուցում	«Թումանյան համայնքի կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ, ԲԱԽ-եր	ՀՈԱԿ-ի բյուջե՝ 2022թ. – 33,650,0 2023թ. – 36,215,0 2024թ. – 38,850.0 2025թ. – 40,200.0 2026թ. –45,100.0 Ընդհանուրը՝ 194,015.0
6.	Աթան բնակավայրի նախկին մշակույթի կենտրոնի երկու սենյակի վերանորոգում, վարչական ներկայացուցչի նստավայրի և երիտասարդական կենտրոնի ստեղծում:	ԲԱԽ Համայնքների ֆինանսիստների միավորում ՀԿ	ՀՖՄ 2,500,0(միանվակ դրամաշնորհ)
7.	Դսեղ բնակավայրի Հայրենական Մեծ պատերազմի հուշահամալիրի տարածքի բարեկարգում և զբոսայգու հիմնում	ԲԱԽ Թումանյանի համայնքապետարան բնակիչներ	Համայնքի բյուջե բնակիչներ 2022թ – Ընդամենը՝ 500.0
8.	Դսեղ բնակավայրում Դեբեդի կիրճին հարակից տարածքում տուրիստական ժամանակակից դիտակետի կառուցում	ԲԱԽ Հայաստանի մանուկներ հիմնադրամ COAF	COAF 2022-2023-Ընդամենը՝ 10000.0
9.	Դսեղ բնակավայրում հիվանդանոցի կառուցում	ԲԱԽ Հայաստանի մանուկներ հիմնադրամ COAF	COAF 2022-2023-Ընդամենը՝ 75000.0
10.	Նվիրատվություններ շահույթ չհետապնդող կազմակերպություններին	ԲԱԽ ՀՀՀԾ-ի և բյուջեի գծով ԽՄ	Համայնքի բյուջե՝ 160.0(տարեկան) Ընդամենը՝ 800.0
11.	Աջակցություն սոցիալապես անապահով ընտանիքներին, նորածիններին նպաստ	ԲԱԽ-եր Թումանյանի համայնքապետարան	Համայնքի բյուջե՝ 2022թ. -3,200.0 2023-2026թթ. – 4,000.0 (տարեկան) Ընդամենը՝ 19,200.0
		ԲԱԽ Լորուտի, Աթանի և Քարինջի	Համայնքի բյուջե՝ Լորուտ՝ 2023թ. - 1,600.0 Աթան՝ 2023թ. –

12.	Լորուտի, Աթանի և Քարինջի հանդիսությունների սրահների վերանորոգում, կոմունալ համակարգերի անցկացում, գույքի ձեռքբերում	ԲԱԽ-եր	850.0 Քարինջ՝ 2022-750,0 Ընդամենը՝ 3,200.0
13.	Չկալով բնակավայրում նախակրթարանի հիմնում	ԲԱԽ UNICEF,բա րերար	UNICEF,բա րերար 2022-2023 – Ընդամենը՝ 12,600.0
14.	Թումանյան քաղաքի միջնակարգ դպրոցի շենքի հիմնանորոգում	Թումանյան ի ԲԱԽ	2024թ. պետբյուջե (հրատապ ծրագիր)՝ 110,000.0
15.	«Թումանյան քաղաքի ՆՈՒՀ», «Դսեղի ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ների շենքի ջեռուցման ընդլայնում	Թումանյան ի, Դսեղի ԲԱԽ-եր	2022-23թ.թ. համայնքի բյուջե՝ 2,000.0
16.	Թումանյան քաղաքի 3-րդ փողոցի 1-ին նրբանցքի N 4 բազմաբնակարան շենքի աստիճանների վերանորոգում	Թումանյան ի ԲԱԽ	2023թ. պետբյուջե՝ 1,100.0
17.	Թումանյան համայնքի փողոցների արտաքին լուսավորության համակարգերի ընդլայնում, բարեկարգում	Թումանյան համայնքի ԲԱԽ-եր	Համայնքի բյուջե՝ 2022-2026թթ.- 550.0 (տարեկան) Ընդամենը՝ 2,200.0
18.	Աթանի 2-րդ փողոցի բարեկարգում, Թումանյան քաղաքի փողոցների բարեկարգում և ասֆալտապատում	Աթանի և Թումանյան ի ԲԱԽ-եր	Համայնքի բյուջե՝ Աթան՝ 2023թ. – 250.0 Թումանյան՝ 2024- 2025թթ.- 1,300.0(տարեկան) Ընդամենը՝2,850. 0
19.	Չկալով-Դսեղ միջհամայնքային ճանապարհի ասֆալտապատում	Չկալովի ԲԱԽ	Պետբյուջե-բարեր՝ 2023-24թ.- 80.000.0 Ընդամենը՝ 80,000,0
20	Մարցից միջբնակավայրային ճանապարհի ճանապարհի հիմնանորոգում	Մարցի ԲԱԽ	Պետբյուջե 2022թ- 36,000,0
21.	Թումանյան քաղաքի հրապարակի և ջրավազանի բարեկարգում	Թումանյան ի ԲԱԽ	Համայնքի բյուջե՝ 2023թ.-850.0
22.	Թումանյան քաղաքի 2-րդ և 3-րդ թաղամասերում, Աթան, Շամուտ, Ահնիձոր, Լորուտ, Քարինջ, Մարց բնակավայրերում խաղահրապարակների կառուցում	ԲԱԽ-եր	Համայնքի բյուջե, ՝ 2022թ.- 700.0 2023թ.- 700.0 Պետական բյուջե՝ 2022թ. - 5,000.0 2023թ. – 6,000.0 Ընդամենը՝ 12,400.0
23	Թումանյան քաղաքի մարզադաշտի բարեկարգում	Թումանյան ի ԲԱԽ	Համայնքի բյուջե՝ 2023թ.-960.0
